

ՄԵՐՈՆԵ ԴՐՍՈՒՄ

«Հռոմի Հիպոկրատը». հայազգի մեծ բժշկապետ Ջորջո Բայլիվի

Ներկայումս՝ 21-րդ դարում, բժշկական ցանկացած ձեռնարկում և դասագրքում մկանները բաժանվում են երկու տեսակի՝ հարթ և միաձիգ զուլավոր: Սակայն քչերին է հայտնի, որ ավելի քան երեք հարյուր տարի առաջ այդ դասակարգումն արել է հայազգի մի բժիշկ-գիտնական, ով 18-րդ դարի առաջին կեսին «հեղաշրջել է եվրոպական միտքը» (1, էջ 72), դարձել ամենահայտնի կազմախոսը և վիրաբույժն Իտալիայում:

Ինչպե՞ս էր հայտնվել այդ երկրում հայազգի մեծանուն բժիշկը, ովքե՞ր էին նրա ծնողները:

Բանն այն է, որ 16-17-րդ դարերում բազմաթիվ հայեր, հատկապես Նոր Ջուդայից՝ իրենց առևտրական գործերը կարգավորելու նպատակով հաճախ մեկնում էին Եվրոպա և հաստատվում տեղի քաղաքներում: Հայկազն անունով մի հայ առևտրական ևս հաստատվել էր Եվրոպական քաղաքներից մեկում՝ Ռազուզայում (ներկայիս Խորվաթիայի Դուբրովնիկ քաղաքում), որտեղ էլ 1668 թ. ծնվել էր նրա որդին՝ ապագա մեծ բժշկապետը Ջորջո Բայլիվին, որի անունը գրականության մեջ երբեմն հանդիպում է նաև Գեորգ Բայլիվի կամ Ջուրո Բազիլիվի տարբերակներով (10):

Պետք է նշել, որ անհայտ է Ջորջո Բայլիվիի հայկական անունը: Հայտնի չէ նաև մոր անունը: Առհասարակ շատ քիչ տվյալներ են պահպանվել նրա ծնողների մասին: Մանկությունից միայն հայտնի է, որ կարծ ժամանակ անց փոքրիկ Ջորջոն որբանում է, և ճակատագրի դիպավածով նրան որդեգրում ու իր ազգանունն է տալիս Իտալիայի բժիշկ Պիետրո Անջելո Բայլիվին, ով որբ մանչուկին իր հետ տանում է Իտալիայի հարավում գտնվող Լեչչե քաղաքը, որտեղ էլ անցնում են նրա մանկության և պատանեկության տարիները (1, էջ 73):

Ղեռն վաղ հասակից Ջորջոն մեծ հետաքրքրություն է ցուցաբերում ուսման նկատմամբ: Իր ուսուցիչներին նա ապշեցնում է արտակարգ ընդունակություններով և աշխատասիրությամբ: Պիետրո Անջելո Բայլիվին ոչինչ չի խնայում իր որդեգրին հիմնավոր կրթություն տալու համար: Իսկ պատանու տարիքը բնական գիտություններն էին, բժշկությունը: Եվ նա կարողանում է հասնել իր նպատակին: Իտալիայի Սալեռնո, Պադուա և Բոլոնիա քաղաքների համալսարանները գերազանց ավարտելով՝ տասնութամյա Ջորջոն ստանում է իմաստասիրության և բժշկագիտության դոկտորի աստիճան (5, էջ 31):

1692 թ. քսանչորսամյա հայազգի բժիշկը հաստատվում է Հռոմում, ուր արդեն 1695 թ. սկսած տեղի «Սապիենտիս» («Իմաստություն») ակադեմիայում որպես պրոֆեսոր դասավանդում է կազմախոսություն և վիրաբույժություն առարկաները, իսկ 1701 թ. սկսած դեկավարում նաև ակադեմիայի տեսական բժշկության ամբիոնը (2, էջ 23-24):

Հռոմում նա ծավալում է գիտամեթոդավոր ժակնա լայն գործունեություն. կարդում է դասախոսություններ, զբաղվում գիտաբժշկական գործունեությամբ: Ջորջո Բայլիվիի համբավը հասնում է Հռոմի

Իննոկենտիոս XII պապին, և նա դառնում է վերջինիս, ինչպես նաև հետագայում Կղեմես XI պապի անձնական բժիշկն ու բարեկամը (4, էջ 163-164):

1696 թ. Հռոմում լատիներենով լույս է տեսնում 28-ամյա բժշկի «Գործնական բժշկություն» երկհատոր աշխատությունը, որը նրան արժանացնում է մեծ փառքի: Նրա համբավը տարածվում է ամենուրեք: Նրան շնորհվում են պատվանուններ՝ «Հռոմի Հիպոկրատ», «Նոր Հիպոկրատ», «Ջահ բժշկություն», «Բժշկության բարենորոգիչ»: Եվ այդ ամենը պատահական չէր: Նա բժշկության մեջ ասպարեզ եկավ որպես նորարար՝ մեծ նշանակություն տալով գործնական բժշկությանը և հատկապես անտիկ բժշկության բարենորոգիչ Հիպոկրատի սկզբունքներին, որոնք հիմնվում են զննության, փորձառության և տրամաբանության վրա (6, էջ 57-58):

Ջորջո Բայլիվիի հաջողության գրավականներից մեկն էլ այն էր, որ նա կարողացավ տեսանել և գործնական բժշկության խնդիրները քննարկել միատեղ, առանց մեկը մյուսից զատելու: Դրա լավագույն առիավատյան այն է, որ նա տեսական բժշկության հսկայածավալ նյութերի հետ տվել է նաև այս կամ այն հիվանդության բուժման բազմաթիվ դեղամիջոցներ, որոնցից «իպեկակուլա» կոչվող դեղը երկար տարիներ կիրառվել է Եվրոպայում որպես դիզենտերիայի բուժման միջոց: Իր «Տեղեկություններ շարժողական նյարդի մասին» աշխատության մեջ Բայլիվին առաջ է քաշել այն միտքը, որ բուժման ակտիվ դերը պայմանավորված է մարմնի ոսկրային ամուր հյուսվածքով (7, էջ 31-32):

Բժշկագիտության պատմության մեջ հայազգի բժիշկը հայտնի է որպես ֆիզիկամեխանիկական ուղղության ներկայացուցիչ, քանի որ մարդկային օրգանիզմի մեջ կատարվող բոլոր փոփոխությունները բացատրել է միայն մեխանիկական գործոններով: Այնուհանդերձ, նա իր ապրած դարաշրջանի այն խիզախ բնագետներից էր, ովքեր քաջ գիտակցել են, որ գործնականում մտքերի նմանատիպ քարացած և հետևողական կիրառմամբ անկարելի է հաջողության հասնել: Ուստի և գործնական բժշկության հարցերում Հիպոկրատից բացի նա հետևել է նաև 16-17-րդ դարերի անգլիացի մեծ իմաստասեր Ֆրենսիս Բեկոնի էմպիրիկ մեթոդոլոգիային:

Ջորջո Բայլիվին բժշկության մեջ մեծ տեղ է հատկացրել դիտողականությանը և փորձին, այդուհանդերձ որոշակի տեղ է հատկացրել նաև բանականությանը, որը, դիտողության հետ կապված, պետք է նպաստեր բժշկագիտության հաջողություններին:

Ժամանակակից տեսական բժշկական հոսանքների ներկայացուցիչների հետ վիճելիս նա միշտ էլ, ինչպես վայել է լրջամիտ գիտնականին, ընդունել է ավելի խելացի և տրամաբանական միջին դիրքը:

Բայլիվին ուսումնասիրել է նաև Իտալիայի հանքային ջրերը, նշել նրանց բուժիչ հատկությունները: Իր դասախոսություններում նա խոսել է հատկապես

Իտալիայում հայտնի Ֆիուչիի հանքային ջրի մասին: Երկար տարիներ մանրակրկիտ ուսումնասիրելով այդ ջրի ֆիզիկա-քիմիական հատկանիշները՝ եկել է այն հստակ համոզմանը, որ վերոհիշյալ ջրի օգնությամբ հնարավոր է վերացնել երիկամներում հանդիպող քարային կուտակումները: Հիշյալ հանքային ջրի բուժիչ հատկությունները նա մանրամասնորեն նկարագրել է «Լեդու, նրա բնույթի, ֆունկցիայի ու հիվանդությունների մասին» աշխատության էջերում: Նման հետազոտությունները 17-րդ դարի վերջին, երբ կենսաբանությունը և քիմիան նոր-նոր էին ձևավորվում որպես բնական գիտություններ, իսկապես արժանի էին լրջագույն ուշադրության (5, էջ 29):

Ջորջո Բայլիվիի մահից հետո նրա որոշ կենսագիրները շատ հաճախ նրան անվանել են նաև «Ֆիուչիի հանքային ջրի գիտական հետազոտողը»: Եվ այդ խրթին գիտահետազոտական աշխատանքը կատարվում էր մանկավարժական ամենօրյա աշխատանքին զուգահեռ: 1700 թ. սկսած Հռոմի համալսարանում նա գործնական բժշկության հետ մեկտեղ դասավանդում էր նաև տեսական բժշկություն (1, էջ 74):

Ըստ իտալացի Մացուբելիի, բազմաթիվ բժիշկներ, ովքեր 18-րդ դարի սկզբներին սկսեցին իրենց գործունեությունը Իտալիայում և Եվրոպայի այլ երկրներում, աշակերտել են Բայլիվին, ով տեղյակ էր իր հայ լինելու մասին և հպարտանում էր դրանով: Նրա հայկական ծագման մասին գիտեին նաև Բայլիվիի ժամանակակիցներից շատերը, և պատահական չէ, որ վերջիններս նրան անվանում էին նաև Ջորջո Բայլիվի-Արմենո (8, էջ 271):

Պետք է նշել, որ հայազգի բժիշկ-գիտնականի մասին շատ է գրվել թե՛ նրա կենդանության օրոք և թե՛ մահից հետո: Այսպես օրինակ՝ 1857 թ. Ջորջո Բայլիվիի մահից ուղիղ 150 տարի անց Փարիզում հրապարակված պատմության և աշխարհագրության հանրագիտարանում երկու էջ նվիրված էր նրան: Հետագայում Հռոմում, Նյու-Յորքում, Էդինբուրգում, Կիենցայում և այլուր հրատարակված հանրագիտարաններում ևս նշվում են Ջ. Բայլիվիի կենսագրությունը և բժշկագիտական գործունեությունը:

1926 թ. Հռոմում լույս է տեսնում 15-18-րդ դդ. ապրած իտալացի հռչակավոր բժիշկներին և բնագետներին նվիրված պրոֆեսոր Պիետրո Կապարոնիի աշխատությունը, որի երեք էջերը նույնպես նվիրված էին Բայլիվին (3, էջ 121): Ջարմանալի զուգադիպությամբ նրա բոլոր կենսագիրները մշտապես շեշտել են նրա ազգային պատկանելիությունը:

Հայ բժիշկ-գիտնականները ևս ծանոթ են եղել Բայլիվիի երկերին չինանալով, սակայն, նրա ծագման մասին:

Հայ իրականության մեջ Բայլիվին՝ որպես հայազգի հռչակավոր բժիշկ, առաջին անգամ նշվում է 1922 թ. հայտնի «Բազմավեպի» էջերում շնորհիվ անվանի բանասեր Գ. Ոսկանյանի: «Դոկտոր Գևորգ Բայլիվի» հոդվածին (8, էջ 270-273), 1930 թվականին

33

նույն «Բազմավեպի» համարներից մեկում հաջորդում է «Գիտնական հայագի բժշկական» խորագիրը կրող խմբագրության կողմից գրված երկրորդ հոդվածը, ուր մասնավորապես գրված էր. «Այս համաճարեղ հայ գիտնականին ամենակարճ կյանքն արգելք չեղավ իրեն կանխահաս համբավ մը վաստակելու գիտուններու մեջ: Այսօր ալ անոր անունը հարգանքով և հատկապես կիիշվի այն աղմուկի մեջ, զոր խաչագող Ասուերան բարձրացուց, մինչդեռ բուն Բայլիվին էր, արդի բժիշկների մեջ 18-րդ դ., ինք առաջին անգամ գյուտավոր փորձերով այդ վարպետության գոյությունը մատնանշեց» (9, էջ 43-44):

Խորհրդային Հայաստանում հայագի բժշկին առաջին անգամ ներկայացրել է ակադեմիկոս Լևոն Հովհաննիսյանն իր «Բժշկության պատմությունը Հայաստանում հին ժամանակներից մինչև մեր օրերը» աշխատության մեջ՝ տալով Ջ. Բայլիվի համառոտ կենսագրությունը և նրա դերը

համաշխարհային բժշկագիտության պատմության մեջ:

Մեծ բժշկապետն ու գիտնականը վախճանվել է 1707 թ. 39 տարեկան հասակում: Հռոմում: Պահպանվել են հավաստի տեղեկություններ, թե ինչպես է Հռոմը սզացել Բայլիվիի վաղաժամ մահը: Նա Իտալիայի բժշկագիտության պատմության մեջ թողել է գիտնականի և բժշկի մեծ համբավ: Երեսուները հազիվ բոլորած, Ջորջո Բայլիվին եվրոպական բազմաթիվ ակադեմիաների և գիտական ընկերությունների, այդ թվում՝ Սուգբուրգի կայսերական և Լոնդոնի Արքայական ընկերությունների անդամ էր (4, էջ 163-164): Նրա թողած բժշկագիտական հսկայածավալ գրականությունը, որը գրված է լատիներենով և իտալերենով, այսօր էլ Իտալիայի ազգային սեփականությունն է և հոգևոր հարստությունը: Այդ աշխատությունները հեղինակի մահից հետո բազմիցս հրատարակվել են Հռոմում, Լիոնում, Վիեննայում, Լայպցիգում և այլուր, թարգմանվել եվրոպական բազմաթիվ լեզուներով:

Ջորջո Բայլիվին մահ հայ ժողովրդի հպար-

տությունն է, իմաստուն հայի այն տեսակը, որով մեր ժողովուրդը ճանաչելի է դառնում համայն աշխարհին:

Վաչագան ԽԱՇՎԱԶԱՆ,
պալմ. գիտ.թեկնածու, դոցենտ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա. Սեգալյուրեան, Հայ և ծագումով հայ բժիշկներ, Խտամբուլ, 1950:
2. Լ. Հովհաննիսյան, Պատկերազարդում հայ բժշկության պատմության վերաբերյալ հնագույն ժամանակներից մինչև մերօրերը, Երևան, 1958:
3. Ռ. Փարսադանյան, Հայ բժշկության պատմությունը, Երևան, 1958:
4. Ա. Բախչինյան, Հայագի գործիչներ: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Կենսագրական հանրագիտակ, Երևան, 2002:
5. Հայ անվանի բժիշկներ, Երևան, 2002:
6. Оганесян Л. А. История медицины в Армении. В 5-и т. Т. 3. Ереван, 1946-1947.
7. Айриш А. П. Армянские ученые-медики. Ереван, 1998.
8. «Բազմավեպ», 1922, սեպտեմբեր:
9. «Բազմավեպ», 1930, հունվար:
10. «Հայաստանի Հանրապետություն», 2001, ապրիլի 14:

Մարտիրոս Սարյանի նամակը Լենինի Բրեժնևին

22.01.1968 թ., Երևան, Մեծարգո Լենինի էլիջ



Մոտ օրերս լրանում է իմ 88 տարին և նախքան այս աշխարհից հեռանալը ցանկություն ունեմ ոտք դնել այն հողի վրա, որտեղից դուրս են եկել իմ նախնիները:

Դրանք միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անիի ավերակներն են, որոնք գտնվում են Թուրքիայի հետ սահման կազմող Ախուրյան գետի հանդիպակաց ափին: Դա՝ համաշխարհային նշանակության ճարտարապետական այդ հուշարձանը, իմ ժողովրդի հպարտությունն է և սեփականությունը: Հինգ քառակուսի կիլոմետր տարածքը, որը զբաղեցնում են Անի քաղաքի ավերակները, մեծ չէ, բայց այդ փոքր հողակտորը հանդիսանում է Հայաստանի սրբավայրը:

Ես ողջ ժողովրդի անունից, ողջ քաղաքակիրթ մարդկության անունից խնդրում եմ Ձեզ, վերադարձրեք Անին մայր հայրենիքի գիրկը, թույլ միք տա նրան վերջնականապես անհետանալ օտարերկրյա տիրապետության հարվածների տակ:

Փրկեցե՛ք Անին և շնորհակալ հայ ժողովուրդը ողջ աշխարհի առջև դարեդար կհատուցի Ձեզ խորին երախտագիտությամբ և հիացմունքով:

Մարտիրոս ՍԱՐՅԱՆ
Սոցիալիստական աշխատանքի հերոս,
ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ,
Լենինյան մրցանակի դափնեկիր

Լավ տրամադրության 10 գաղտնիք

1. Միշտ բարձր տրամադրություն ունենալու համար սովորե՛ք ինքներդ ձեզ կառավարել: Դատարկ բաներից մի վերավորվե՛ք, փորձե՛ք չկռվել ձեզ մտերիմ մարդկանց հետ, ներք է նրանց: Ներելով՝ ազատվում եք զայրույթից և դիսպակազացություններից, որոնք առաջին հերթին հենց ձեզ են կործանում: 2. Փորձե՛ք աշխարհին հումորով նայել: Նույնիսկ եթե ձեզ վիրավորել են, կամ հայտնվել եք ծանր իրավիճակում, այնուամենայնիվ ժպտացե՛ք և ինքներդ ձեզ ասե՛ք. «Սա էլ կանցնի»: Անհավատալի է, բայց իսկապես նրանց համար, ովքեր անկեղծորեն հավատում են սրան, վատ բաներն անցնում են: 3. Մի նստե՛ք տանը՝ ամբողջ աշխարհից նեղանալով: Կարող եք չկասկածել՝ փողոցում, ընկերների և ծանոթների շրջապատում, վատ տրամադրություն չի լինում: Ապացուցված է: 4. Ձեր կյանք նորարարության տարրեր մտցրե՛ք: Չոգեբանները խորհուրդ են տալիս ժամանակ առ ժամանակ փոխել սովորությունները, օրինակ՝ նոր հոբի ունենալ կամ հագուստի ոճը փոխել: 5. Սովորե՛ք լիցքաթափվել: Երբ ինչ-որ հոգնեցուցիչ աշխատանք էք անում, մտածե՛ք մի ինչ-որ հաճելի բանի մասին: Օրինակ՝ ընկերների կամ սիրելիի հետ առաջիկա հանդիպման մասին: 6. Լողո՛ւ՝ զբաղվե՛ք: Ջուրը մարմնիդ օգնում է հանգստանալ և լիցքաթափվել՝ տոնուսն ու տրամադրությունը բարձրացնելով: Բացի դրանից, դժբախտ պատահարի և ժխտվածք ստանալու հնարավորությունը շատ քիչ է, համեմատած ջրային այլ մարզաձևերի հետ: 7. Կանգնե՛ք, հե՛տ նայե՛ք... Երբե՛ք մարդիկ ծուղակում են՝ հայտնվում, որովհետև ժամանակ չեն ունենում մտածելու՝ արդյոք անհրաժեշտ ուղղությամբ են շարժվում: Ժամանակն է մտքերը, նպատակները, կապերը կարգի բերելու այնպես, ինչպես պարբերաբար սենյակն եք կարգի բերում: 8. Թեթև նայե՛ք կյանքին: Կյանքում միշտ էլ սխրագործությունների տեղ կա, բայց ոչ միշտ են դրանք անհրաժեշտ: Փորձե՛ք կենտրոնանալ նրա վրա, ինչ ներկա պահին եք անում: 9. Պահպանե՛ք բենեֆիտների գաղափարը: Կյանքը հենց շարժում է, և այն, ինչ այսօր ողբերգություն է, հնարավոր է, վաղը ժպիտ կպարզվի: 2-՝ որ իզուր չեն ասում՝ օրը կգա բարին հետը (սա ասացվածք է, պետք էր համարժեք գտնել): 10. Մոռացե՛ք տիպաբանությունների մասին: Եթե ուզում եք պառկել անկողնում ու խղճալ ինքներդ ձեզ, ավելի լավ է չենթարկվել այդ ցանկությունը: «Շարժվե՛ք, և ձեր գզացմունքները կդառնան ավելի շարժական, – ասել է հոգեբան Մերիոն Դիվիդորտը, – Ֆիլմ նայե՛ք, մաքրություն արե՛ք...»:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-Ը ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏՈՆ Է

Սեպտեմբերի 2-ը համազգային տոն է՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման օրը: Հաղթելով Ադրբեյջանի կողմից պարտադրված պատերազմում, արտահայտելով ժողովրդի հավաքական կամքը՝ Արցախը հռչակեց և պաշտպանեց իր անկախությունը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հռչակագիրն ընդունվեց ժողովրդական պատգամավորների ԼՂԻՄ մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների՝ բոլոր կարգի պատգամավորների մասնակցությամբ տեղի ունեցած համատեղ նստաշրջանում:

Սեպտեմբերի 2-ին լրանում է այդ նշանակալի իրադարձության 22-րդ տարեդարձը: Անցած տարիների ընթացքում արցախահայությունը ապացուցեց, որ հավատարիմ է ժողովրդավարության արժեքներին և պատրաստ է հաղթահարել պետականաշինության ճանապարհին ծագած բոլոր դժվարությունները: Դեռևս կան չլուծված բազմաթիվ խնդիրներ, սակայն իրողությունն է նաև այն, որ կա Լեռնային Ղարաբաղի 22-ամյա երիտասարդ հանրապետությունը, որ վստահ քայլերով շարժվում է առաջ՝ ապավինելով սեփական ուժերին, Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի մեր հայրենակիցների շարունակական աջակցությանը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում անկախության առաջին իսկ տարիներից թողարկվել են նամականիշեր: Առաջիններից մեկը պետական խորհրդանիշերը՝ դրոշմը, զինանշանը, նաև Սարգիս Բաղդասարյանի «Մենք ենք, մեր սարերը» հայտնի հուշարձանը պատկերող նամականիշերն են:



Ուշագրավ է Գանձասարը պատկերող մանրաթերթիկը, որը հետագայում Շուշիի ազատագրման 5-րդ տարեդարձի առթիվ, լույս տեսավ վերանշումով՝ 09.05.1992 – 09.05.1997 թվազրությամբ և «Շուշիի ազատագրման հիմնգրող տարի» հայերեն և անգլերեն մակագրությամբ: Խաչի ֆոնին պատկերված են վերևում Գանձասարի վանքը, ներքևում՝ ազգային տարագրվ դարաբաղի կին և տղամարդ: Հետագայում ևս տպագրվել են արցախյան նշանավոր վանքերի, այդ թվում և Ղազանչեցոց վանքի պատկերով նամականիշեր: Մի քանի նամականիշ է թողարկվել Ղարաբաղի անկախության 20-ամյակի կապակցությամբ:


Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում թողարկված նամականիշերը բազմազան են իրենց թեմատիկայով. կան Արցախի բուսական և կենդանական աշխարհին, բնաշխարհի պաշտպանությանը նվիրված նամականիշեր: Թողարկվել են նաև առաջին հայ տիեզերագնաց Ջեյմս Բադյանին, նաև աշխարհի առաջին տիեզերագնաց Յուրի Գագարինի թռիչքի 50-ամյակին նվիրված նամականիշեր: Առանձին նամականիշ է նվիրվել «Մանկական եվրատեսիլ» հաղթող Վլադիմիր Արզումանյանին:

Ղարաբաղյան շարժման 10-ամյակի կապակցությամբ 1998-ին Հայաստանի Հանրապետության հետ համատեղ թողարկվել է նամականիշ՝ ճախրող արծվի պատկերով՝ համապատասխան հայերեն և անգլերեն մակագրություններով:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում թողարկված ավելի քան հարյուր նամականիշերը, ծրարները, բացիկներն ու հատուկ կնիքները մեծ հետաքրքրություն են ներկայացնում աշխարհի ֆիլատելիստների շրջանում:

Վարուժան ԱՆՏՈՆՅԱՆ

Իմաստունի դասը – առակ



Մի ծեր ու իմաստուն մարդ ասում է իր ընկերոջը.

– Լավ ուսումնասիրիր սենյակը, որում մենք գտնվում ենք և փորձիր հիշել բոլոր շագանակագույն առարկաները:

Սենյակում շատ շագանակագույն առարկաներ կային և ընկերը շատ արագ կարողացավ հաղթահարել այդ խնդիրը:

Բայց իմաստունը նրան հղեց երկրորդ հարցը.

– Իսկ հիմա փակիր աչքերդ և թվիր բոլոր երկնագույն առարկաները:

Ընկերը գայրանում և շփոթվում է.

– Ես ոչ մի երկնագույն առարկա չեմ տեսել, չէ՞ որ ես քո խնդրանքով ուշադրություն եմ դարձրել միայն շագանակագույն առարկաներին:

Ինչին իմաստունը պատասխանում է.

– Բացիր աչքերդ և ուշադիր նայիր, որովհետև սենյակում բազում երկնագույն առարկաներ կան: Եթե դու փնտրում ես սենյակում միայն շագանակագույն առարկաներ, իսկ կյանքում միայն վատը՝ ապա դու հենց դրանք էլ կտեսնես և հենց դրանք դու միայն կհիշես և միայն դրանք մասնակցություն կունենան քո կյանքում:

Հիշիր. եթե դու փնտրում ես վատը, դու միայն դա էլ կգտես և չես նկատի ամեն լավը, որոնք քեզ շրջապատում են:

arxangelo.info

Քաղաք Արմենիա՝ Կոլումբիայում




Քաղաքը հիմնվել է 1880-ական թվականներին և դժվար չէ կռահել, որ քաղաքը հիմնվել է հայերի կողմից:

Քաղաքը հայտնի է իր էլիտար սուրճերի տեսակներով և այդ պատճառով Արմենիային անվանում են նաև Կոլումբիայի «սուրճի մայրաքաղաք»:

Արմենիայում գործնականորեն բացակայում են աղքատության որևէ նախանշաններ և Արմենիան հանդիսանում է Կոլումբիայի ամենամաքուր և ամենագեղեցիկ քաղաքներից մեկը:




Հայոց այբուբենի գաղտնագրման գաղտնիքը



Արծվի Ալեքսանյանը մասնագիտությամբ գեոֆիզիկ է։ Նախ գերագանց գնահատականներով ընդունվել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետ, սակայն շուտով հասկացել է, որ ֆիզիկան իրեն չի բավարարում, դուրս է եկել, ծառայել է բանակում, իսկ հետո ընդունվել է Երևանի պետական համալսարանի Երկրաբանական ֆակուլտետի գեոֆիզիկայի բաժին։ Ունի հետաքրքրությունների լայն շրջանակ։ Արծվի Ալեքսանյանը շուրջ 40 տարի ուսումնասիրել է այբուբենը և եկել այն եզրակացության, որ հայոց այբուբենը ոչ միայն ազգային, այլև համամարդկային նախաայբուբենն է (պրոտոայբուբեն)։ Այնտեղ հայտնաբերել է մաթեմատիկական օրինաչափություններ, որոնք չկան և ոչ մի ուրիշ այբուբենում։ Հենց սա էլ, ըստ Ա.

Քանի որ մի ապացույցը դեռ բավարար չէի համարում, ինձ մի քանի ապացույցներ էին անհրաժեշտ։ Օրինակ, ինչու պետք է հայերեն «ր» տառով բառեր չսկսվեն, մինչդեռ այլ լեզուներով նման բազմաթիվ բառեր կան, իսկ «ր»-ով սկսվող բառերը արտաբերելը մեզ համար խնդիր չէ։ Ասես մի ինչ-որ ձեռք վերցրել և ջնջել է «ր» տառով սկսվող ողջ բառաշարքը։ Մինչդեռ հետաքրքիրն այն է, որ երբ «ր»-ից առաջ դնում ենք բոլոր ձայնավորները, դրանք իմաստ են ստանում՝ օր, իր, ուր և այլն, որոնք պատասխանում են՝ որտեղ, ինչ և այլ իմացաբանական հարցերի։ Այդ ամենը գուցե առաջին հայացքից մանրուք է թվում, բայց այդ մանրուքն ինձ մեծ բան է ցույց տվել», – ասաց Արծվի Ալեքսանյանը։ Հայոց այբուբենի կառուցվածքը, ըստ Ա. Ալեքսանյանի, պատահական չէ։ «Եթե եռանկյան մեջ շարում ենք այբուբենի 36 տառերը, ապա եռանկյան գագաթներում ստանում ենք ԱՄՔ տառերը, որը հենց ասելիք, ապ բառն է, որը ռուսերենում դառնում է *сказка*», – ներկայացրեց Ա. Ալեքսանյանը՝ ավելացնելով, որ մաշտոցյան այբուբենը մաթեմատիկական մատրիցա է ոչ միայն խոսակցական լեզվի համար, այլ նաև ունիվերսալ կոդ է բոլոր տեսակի հաղորդակցությունների համար։ Ա. Ալեքսանյանը գիտակցում է, որ շատերին այս ամենը կարող է տարօրինակ և անհավանական թվալ, սակայն

փությունների անգամ մեկ տոկոսը, այսինքն՝ նրանք, ի տարբերություն մեր այբուբենի, մաթեմատիկական սխառն չեն, մաթեմատիկական ալգորիթմ։ Մինչդեռ տառերի տակ գաղտնագրված ինֆորմացիան կարդալու համար նախ պետք է ճիշտ գտնես ձևը, այսինքն՝ տառի ձևը կապես մեր ենթագիտակցությանը ծանոթ այլ ֆիզիկական պարամետրերի հետ։ Տառերի տակ գտնվող ինֆորմացիան վեր հանելու դեպքում մենք հսկայական տեղեկատվություն կունենանք», – ասաց Ա. Ալեքսանյանը։ Ըստ Ա. Ալեքսանյանի՝ աշխարհում դեռևս որևէ լեզվաբան չի ասել, որ տառերի հերթականությունը պետք է դիտել որպես մաթեմատիկական շարք, ավելի ճիշտ՝ ֆիզիկա-մաթեմատիկական շարք։ Մակայն ինքը այբուբենը դիտարկում է հենց այդպես։ Օրինակ, խմբավորելով արտասանությամբ միմյանց մոտ գտնվող տառերը, օրինակ՝ ԲՊՓ, ԳԳԲ և այլն, Ա. Ալեքսանյանը Հայոց այբուբենից ստացել է 5 եռանկյունի։ Մինչդեռ, օրինակ՝ ռուսերեն լեզվի մեջ նման երեք տառանոց խմբեր գոյություն չունեն։ «Մեր այբուբենը, ի տարբերություն մյուս լեզուների, կատարյալ սխառն է։ Մեր այբուբենը համամարդկային գանձ է, և ես հիանում եմ դրանով։ Հայոց այբուբենում մենք կարող ենք գտնել արդի շատ կարևոր և կիրառական ինֆորմացիաներ։ Օրինակ՝ այբուբենի ալգորիթմով կարելի է ստեղծել ավելի



Ալեքսանյանի՝ ամենահամոզիչ ապացույցն է այն բանի, որ Հայոց այբուբենը ստեղծվել է ոչ թե 406 թ.-ին, այլ շատ ավելի վաղ, անհիշելի ժամանակներից։ Նախապատմական ժամանակներից։ Այդ օրինաչափություններն արտահայտվում են բազմաթիվ գծագրերով և բանաձևերով։ Այդ տարիների ընթացքում Ա. Ալեքսանյանը բացահայտել է Հայոց այբուբենում գտնվող գաղտնագրման բազմաթիվ մեթոդներ։ «Դա անհավանական է թվում, սակայն այդ ամենն ունեն անհերքելի մաթեմատիկական ապացույցներ։ Ես դա կարող եմ ապացուցել։ Այբուբենի գաղտնագրման մեթոդները բազմաուստասկ են և շատ հետաքրքիր։ Պարզվում է, որ դա մի ամբողջական սխառն է, որտեղ անմիջական կապ կա նրանց ձևի, քանակի և տառերի հերթականության միջև։ Եվ մեծ համբերություն եր պետք՝ շտապ եզրակացություններ չանելու, անմիջապես ենթադրություններ չանելու և այդ ամենը ստուգելու համար։

այդ եզրահանգումներին նա հասել է տարիների քրտնաջան աշխատանքի շնորհիվ։ «Ես ուսումնասիրել եմ պատմությանը հայտնի ինֆորմացիայի հին արմատները (սանկրիպտ և այլն), որտեղ բոլորը միախառնում են և հնաբանությունը, և մարդաբանությունը, և լեզուն, և մաթեմատիկան, և քիմիան, ամեն ինչ կարծես այդ ամբողջական տեղեկատվության մի մասնիկն է, ու լրացնում են մեկը մյուսին։ Մակայն մի բան ես վստահ կարող եմ և պատրաստ եմ ապացուցել, որ բոլոր այբուբենները ծնվել են հայերենի այբուբենից, և սա ասում եմ ոչ թե զուտ ազգայնասիրական տեսանկյունից էլնելով», – ասաց Ա. Ալեքսանյանը։ Վերջինիս համոզմամբ՝ ոչ միայն կարևոր է տառերի ձևը, այլև դրանց հերթականությունը, քանակը պատահական չեն և հատուկ նշանակություն ունեն։ «Հայերեն այբուբենում այդ ամենը կատարյալ է ներկայացված։ Ոչ մի այբուբեն չունի մեր այբուբենի մեջ եղած օրինաչա-

հզոր համակարգիչներ, քան ներկայիս համակարգիչներն են։ Այսպիսով՝ մաթեմատիկական ճշգրտությամբ կարելի է ապացուցել, որ հայերենի այբուբենից են ծնվել մյուս բոլոր այբուբենները, և խոսքը ոչ միայն տարբեր լեզուներին է վերաբերում, այլև հաղորդակցության բոլոր ձևերին, օրինակ՝ երաժշտական լեզվին, մաթեմատիկական լեզվին կամ, ասենք, ձկների լեզվին։ Ավելի քան 40 տարի ես ուսումնասիրել եմ և պարզել մաթեմատիկական ճշգրտության և տառերի քանակը, ձևը և դրանց հերթականությունը։ Այդ բոլորի համար համընդհանուր սխառն եմ գտել», – ասաց մեր զրուցակիցը։ «Տրամաբանական վերլուծության ենթարկելով մյուս լեզուների այբուբենը, պատրաստ եմ ցանկացած ընդդիմախոսների «քար ծակող» փաստարկներով ապացուցել, որ բոլոր այբուբենները ծնվել են հայոց այբուբենից։

Մաշտոցը ոչ թե հնարել, այլ վերականգնել է հայոց տառերը:

Գիտնականները պնդում են՝ Նախամաշտոցյան գիր գոյություն է ունեցել

Թարգմանչաց տոնը ներառված է Հայ առաքելական եկեղեցու տոնացույցում... Այս հանգամանքը տպավորություն է ստեղծում, թե հայ իրականության մեջ թարգմանության արվեստը սկիզբ է առնում քրիստոնեության ընդունումից հետո և պայմանավորված է Սուրբ Մեսրոպ Մաշտոցի արտասահմանյան շրջագայությունից հետո Հայաստանում հայտնված նշանագրերով...

Հայագիտության մեջ գերակշռող տեսակետը, թե 405 թ. առաջ հայոց լեզուն երբևէ գրավոր չի եղել, այժմ արդեն դեմ է առնում մի անանցանելի պատի, որից այն կողմ թափանցում են միայն չիֆմավորված պնդումներ... Բսկ գիտական կեղծարարությունից զերծ ուսումնասիրություններն ու փաստարկումները վկայում են գիր, ուրեմն՝ նաև գրականություն, իսկ սա նշանակում է նաև թարգմանական արվեստ, նախաքրիստոնեական Հայաստանում առկա է եղել...

Դեռևս խորհրդային տարիների հայ գրականության դասագրքերում մի աղոտ ակնարկ կար այն մասին, թե հնարավոր է՝ հեթանոսական մեղաններում գրականություն է ստեղծվել, որը ոչնչացվել է քրիստոնեություն ընդունելու ժամանակ, երբ ավերվել են բոլոր հեթանոսական տաճարները... Այս մշուշոտ ենթադրությունը հետագա կրթության ընթացքում լիովին տեղը զիջում էր համոզմունքին, թե մինչև հինգերորդ դարը հայերն օգտվել են միայն ուրիշների ստեղծած գրերից, և գրավոր հաղորդակցությունն էլ եղել է այդ գրերին համապատասխան օտար լեզուներով...

Ցավոք, նման մտայնությունը հայագիտության մեջ խոր արմատներ ունի... Օրինակ, ժամանակին մեզ է փոխանցվում մի խոր «ճշմարտություն»՝ եթե որևէ բան հայերե-

նում ու պարսկերենում ընդհանուր էր, անպայման եզրակացությունը մեկն էր՝ հայերենը փոխ է առել պարսկերենից, եթե, իհարկե, պատահաբար չի պահպանել հնդեվրոպական նախալեզվից ժառանգածը... Նման կերպ պարզվում էր, իբր հայերենը մի անտակ պարկ է, որի մեջ իրենց բառապաշարն են լցրել մեզ հետ առնչվող բոլոր լեզուները, իսկ մենք ուրիշներին տալու գրեթե ոչինչ չենք ունեցել:

Ե՛ղջ անտիկ գրականության մեր դասախոսը՝ Լևոն Ներսիսյանը, ասում էր՝ հին հունական մշակույթն ու հինգերորդ դարի հայ գրականությունը նույն տեսակի հրաշքներ են... Այսօրվա գիտությունը այդ երկու «հրաշքն» էլ բացատրելի է համարում: Քայլ առ քայլ հայտնաբերվում են անհերքելի փաստեր, որոնց համաձայն՝ հազարամյակներ առաջ մարդկային քաղաքակրթությունը շատ ավելի զարգացած է եղել, քան այսօր հնարավոր է երևակայել... Մի կողմ թողնելով հունական մշակույթի խնդիրը, նշենք՝ հինգերորդ դարում՝ մեր գրականության ոսկեդարում, առաջին ծավալուն գործը, որ հայերեն թարգմանվեց, Աստվածաշունչն էր: Ու հենց այս առաջին թարգմանությունն էլ արժանացավ «թագուհի թարգմանչաց» բնորոշումին: Մյուս «հրաշքը», անկասկած, իբրև թե նոր միայն գրավոր դարձած լեզվով միանգամից գրականության ոսկեդարի հաստատումն էր, այն դեպքում, երբ դրանից հետո արդեն տասնվեց դար հայ գրականության ընթացքը չի ընդհատվել:

Վերջերս ծանոթացա հայագետ Արտակ Մովսիսյանի մեկնաբանությանը. միջազգային փորձը հաստատում է՝ երբ գիր չունեցող, իսկ դա նշանակում է՝ գրական մշակման չենթարկված, բարբառի վիճակում գտնվող որևէ լեզու նոր-նոր գրի է առնվում, շուրջ 7000 բառից կազմված բառապաշար է ունենում, մինչև որ այսուայնտեղից փոխ է առնում ու լրացնում գաղափարների, երևույթների, առարկաների պակասող անունները: Մինչդեռ հինգերորդ դարի հայերենում միանգամից շուրջ 60000 հայերեն բառ կա: Արդյոք սա էլ է հրաշք, թե պարզապես նշանակում է, որ նախաքրիստոնեական Հայաստանում հայերենը գրավոր լեզու է եղել, մշակվել է, հարստացել լեզվական կաղապարներով, արտահայտչամիջոցներով:

Եթե հայերենը գրավոր չի եղել, տեսնես ինչ է անում հայոց դիցարանում գրի ու դպրության Տիր աստվածը, միթե բազմազանության համար...

Բանասիրության դոկտոր Ալբերտ Մուշեղյանի հրապարակումներից մեկի վերնագիրն է՝ «Հայոց լեզվով գրքեր Մեսրոպ Մաշտոցից չորս դար առաջ»: Գիտնականը գրում է. «Նախաքրիստոնեական շրջանում գոյություն ունեցած հայերեն գրի և գրականության մասին վկայություններ են պահ-

պանվել անտիկ օտար հեղինակների երկերում: Հռչակավոր հույն փիլիսոփա և պատմագիր Մետրոդորոս Սկեփսիացին, ապրելով Պոնտոսում և Հայաստանում մինչև մ.թ.ա. 70 թ., գրել է Տիգրան Մեծի պատմությունը և «Կենդանիների բանականությունը» փիլիսոփայական երկը: Այս վերջինը, ըստ Փիլոն Եբրայեցու (Ալեքսանդրացու) հաղորդման, որն ապրել է մ.թ.ա. I դ. վերջին քառորդից մինչև մ.թ. I դ. կեսը, թարգմանված է եղել հայերեն: Փիլոն Եբրայեցու նման քաջատեղյակ և բժախնդիք օտար հեղինակի այս համոզիչ հաղորդումը մեր թվարկության դարագլխին գոյություն ունեցած հայալեզու գրականության մասին, որ վկայակոչվում է առաջին անգամ, չի կարող չառասանել նույնիսկ ամենակարծի հակաթեզերը:

Շենք միայն Փիլոնի սույն վկայությունը բավական է՝ ժխտելու տարածված կարծիքը, որ եթե նախամաշտոցյան շրջանում գոյություն է ունեցել գրավոր հայ գրականություն, ապա միայն հունարեն, ասորերեն կամ պարսկերեն լեզուներով, իսկ հայոց լեզվով եղել է միայն բանավոր գրականություն, այսինքն բանահյուսություն: Եվ անմիջապես հարց է ծագում՝ ինչ գրով են գրված եղել երեք հայալեզու գրքերը, եթե ոչ հայերեն այբուբենով, որի մասին վկայում է 3-րդ դարի ժամանակագիր և եկեղեցական մեկնիչ Հիպոլիտոսը:

Ալբերտ Մուշեղյանը նաև նշում է, որ 234-235 թթ. գրած իր աշխատության մեջ Հիպոլիտոսը հայերին դասել է գիր ունեցող ազգերի շարքին. «Հունարեն բնագրով իր «Ժամանակագրության» մեջ՝ գրված Ալեքսանդր Սևերոս կայսեր 13-րդ տարում մ.թ. 234 - 235 թթ., Հաբեթի ցեղի 47 ազգերի շարքում որպես գրագետ (գիր ունեցող), Հիպոլիտոսը հիշատակում է հետևյալ յոթին իբրերն, լատիներն, որոնց գիրը նաև հռոմեական են գործածում, իսպանացիք, հույներ, մարեր, հայեր»:

Եվ վերջապես՝ բուն հայոց գրերի մասին: Ժայռապատկերներ և տարբեր արձանագրություններ ուսումնասիրողները վաղուց են նկատել՝ հազարամյակներ ի վեր Հայաստանի ժայռերին ու քարերին պատկերվել են նշաններ, որոնք շատ նման են մեր այբուբենի տառերին և այսօր գործածվող այլ նշանագրերի: Պարիս Շերունու «Հայերը և հնագույն Հայաստանը» գրքի 108-րդ էջում պատկերված աղյուսակն ավելի քան խոսում է, եզրակացությունն էլ այն, թե հայոց տառերն են դարձել թե փյունիկյան, թե արամեական կոչվող գրերի հիմքը: Ես հակված չեմ մտածելու, թե քանի որ Շերունին պատմաբան կամ բանասեր չէ, ուրեմն իրավունք չունի հայագիտությանը զբաղվելու. նրա փաստարկներն ինձ համոզում են: Մասնավորապես խոսելով

60

Բացի դրանից, դրանք Հայոց այբուբենի կիսահասկացված, թերի ձևերն են: «Ես այբուբենի մեջ գտա նոտաները, նոտաների թվային մաթեմատիկական արժեքը, որոնք հայտաբերվել են ընդամենը վերջերս: Ցանկացած նոտա կոտորակ է, և այդ կոտորակների արժեքը նույնպես դրված է մեր այբուբենի մեջ: Ես կենսաբան չեմ, սակայն ինձ թվում է, որ Հայոց այբուբենում կա նաև մարդու գենետիկ կոդի գաղտնիքը, ես հիմքեր ունեմ այդպես մտածելու», - ասում է Ա. Ալեքսանյանը: Ա. Ալեքսանյանը համոզված է, որ «մեր այբուբենը ոչ միայն մեր ազգի, այլև համամարդկային և համաշխարհային գանձ է: Մեր այբուբենը մեր գերհզոր նախնիների, հայրերի կողմավորված փոխանցում է մեզ, այբուբենի տակ գտնվող գանձից, ցանկալի է, որ առաջինը օգտվի մեր ազգը»:

Լուսինե ՄՈՎՍԻՍՅԱՆ

73

Մերոպ Մաշտոցի արտասահմանյան ուղևորության մասին, որի նպատակն էր հայոց լեզվի համար գրանշաններ ստեղծելը, Հերունին եզրակացնում է, որ նա այնտեղ ուղղակի փնտրել է հայերեն գրքեր, որոնք Հայաստանում անխնա ոչնչացվել էին: Անցած հարյուր տարվա ընթացքում ևս մարդիկ մոռացել էին, թե ինչպես են հնչում այն նշանները, որոնք դեռևս պահպանվել էին Հայաստանի արձանագրություններում

ու ժայռապատկերներին: Մաշտոցի ու նրա աշակերտների նպատակն էր օտար երկրների գրադարաններում փնտրել ու գտնել հայերեն գրքեր և դրանց միջոցով կրկին «խոսեցնել» համարացած գրերը: Ըստ Հերունու՝ Մաշտոցը ոչ թե հնարել, այլ վերականգնել է հայոց տառերը:

Իսկ այժմ, երբ ունենք թարգմանական հարուստ ավանդույթներ, տեղեկատվական տեխնոլոգիաների մեր դարում դրանք չենք գնահատում ու կորցնում ենք... Ժամանակը չէ, որ օտար կաղապարները, բառապաշարն

ու արտասանությունը հայերենին անքննադատ պարտադրելու փոխարեն սովորենք հարգել մեր լեզվի օրինաչափությունները... Մեկ-մեկ կարծիքներ են հընչում, թե հայերենը հարմար չէ այս կամ այն ոլորտում կիրառելու համար... Նման դեպքերում ես մի պատասխան ունեմ՝ եթե մտքերը դժվարությամբ են արտահայտվում, մեղավորը ոչ թե լեզուն է, այլ դրա իմացության մակարդակը...

Արմենուհի ԹՈՒՄԱՆՅԱՆ

Հայկ ՌԱՅԱՆՅԱՆ

Ծնվել է Աբխազիայում անցյալ դարի առաջին կեսին: Ուսանել է Երևանի ռուսական մանկավարժական ինստիտուտում, ապա նաև՝ Սուխումի մանկավարժական ինստիտուտի պատմական մասնաճյուղում: Եղել է ուսուցիչ և համամիութենական «Գիտելիք» ընկերության դասախոս: Այցելել է արտասահմանյան մի քանի երկրներ: Հրատարակել է առակների երկու ժողովածու: Չնայած տարիքին, Հայկ Ռայանյանը այժմ զբաղվում է գործարարությամբ և հնդկեղեններից պատրաստած սրինգներով ուտի տակ է առել սնծովյան լողավազանները՝ Նոր Աֆոնից մինչև Անապա գրնգացնելով հայկական և ռուսական հոգեպարար մեղեդիներ:

Հույսով է, որ իր հարյուրամյակին կտպագրի երրորդ ժողովածուն: Նմուշներ ենք ներկայացնում ապագա գրքից:

ԱՌԱՎՆԵՐ

ՍԱՌՈՒՅՑՆ ՈՒ ՋՈՒՐԸ

Մառույցը ջրին մի անգամ հեզնեց.
– Ջուր, անսանձ հեղեղ ու աղետ ես մեծ,
Իսկ ես ապրում եմ հանգիստ ու խաղաղ
Համայն աշխարհի ծալքերում այս պաղ:


– Մառույց, դու գուր ես
Քարկոծում ինձ վես,
Չէ՛ որ ամենուր՝ այսպես, թե այնպես,
Դու էլ խոս ջուր ես՝ սառն ու պնդերես:

ՃԱՅԻՃՆ ՈՒ ԱՐՔՈՒՐԸ

Ճահիճը թե՛ այ աղբյուր,
Դու միշտ ջինջ ես ու մաքուր,
Ես՝ պղտոր եմ ու նեխված...
Եվ աաղբյուրը հեզ աաց.
– Ճահիճ, գուր ես նժվում.
«Հոսող ջուրը չի նեխվում»:

ՇՈՒՆՆ ՈՒ ՏԵՐԸ

Մի ժլատ շանը նախատեց այսպես.
– Ես եմ գնել քեզ
Դու խոս իմ շունն ես,
Բա քո արարքից դու չե՛ս ամաչում,
Գնում ուրիշի դռանն ես հաչում:
Ամո թե է, չանես էլ այդպիսի բան:
Շունը տիրոջը տվեց պատասխան.
– Տեր իմ, հասկացիր, ես հիմար հո չե՛մ,
Որտեղ հաց կտան, այնտեղ կհաչեմ:



ԱՍՈՒՄ ԵՆ...

Ասում են, իբր, գիտությամբ հզոր
Այս հողագնդի կես միլիարդ մարդկանց
Բյուր երակներում հոսում է այսօր
Մեր սուրբ հայկական արյունը նախնայաց:

Վարկածը այս մեծ չի ժխտում ոչ ոք,
Թեև մեր գոյը եղել է դժվար,
Եվ հայոց արյամբ պարզվել է, իրոք,
Նոր հանձարներ են գալիս այս աշխարհը:

*Հայկ ՌԱՅԱՆՅԱՆ
Դագոմիս*

Պղնձագործն ու երկաթագործն միմյանց խնամի դառնալու ժամանակ վիճեցին, յուրաքանչյուրն իր արհեստն էր գովաբանում մեծաբարբառ, և նրանց մեջ հակառակություն ըն-

կավ. գնացին ձերերի ատյանը: Ծերունիներն ասացին, թե հասարակաց օգտակարը պատվական է:

Մխիթար ԳՈՇ

Նամակ խմբագրությանը

Ռուսաստանի գրախանութներում հայկական գրքեր չեն վաճառվում: Եվ որպեսզի գրական մայրենին թարմ մնա մեր լեզվին, ուրախությամբ դիտում ենք Երևանի հեռուստաալիքները, առնչվում մայր հայրենիքում տեղի ունեցող իրադարձություններին, մեղմում հոգու կարոտը: Ինչպես ռուսներն են ասում «попычаем познакомиться с приятным». Սակայն կապույտ տեսաշրջանակներից լսում ենք հաճախ աղավաղված հայերեն: Ես հինգ տարի ուսանել եմ Երևանում: Այն տարիներին այսօրվա ցնցող աղավաղումները չկային: Հաղորդավարների, գիտնականների, մշակույթի ներկայացուցիչների բերաններից հնչում է՝ բերում **Ա**, գերում **Ա**, գալիս **Ա**, գնում **Ա**, մնում **Ա**, ուզում **Ա**, կարամ, այլ ու այլ բայեր, օժանդակ է բայը դարձնում են **Ա**, որը ավելի շուտ հոդակապ է: Նման խոսակցական լեզուն անհանդուրժելի է լսողների, մայրենի գրական հայերենը գնահատողների համար: Եթե Հայաստանում նման լեզվով են արտահայտվում, ապա արտերկրում ծնված և ապրող հայրենակիցներս ինչպե՞ս մնան նվիրյալ մայրենի անաղարտ լեզվին:

Սիրական ՍԵՎՈՒՆԻ
Ռուսաստան, Լազարևսկ

ԳՆՈՒՄ ա, ԳԱԼԻՍ ա

Կարոտն էր պոռթկում Գաբելի հոգում
Եվ աճապարեց Հայաստան գնալ,
Ուսում էր առել նա հայոց երկրում,
Մայրենին գիտեր ջրի պես գուլալ:

Որքա՛ն զարմացավ համշենցին, իրոք,
Երբ անհամ բառեր լսեց ամենուր,
Օժանդակ բայով չէր խոսում ոչ ոք,
Է-ի փոխարեն Ա-ն էր ընդհանուր:

Նույնիսկ Էկրանից մարդիկ գիտնական
Եվ դերասաններ փառքի վաստակով,
Է-ի փոխարեն ասում էին Ա-ն,
Ուստի նա ապշեց ամբողջ հասակով:

Միշտ աղավաղված բառերի շարան,
Ասեմ՝ ես կարամ, բայց դու էլ կարա ա,
Այսպես է խոսում անգամ պաշտոնյան -
Գնում Ա լսեմ, ո՛նց չզարմանա:

Ուղեղում այնքա՛ն Ա-եր գնգացին,
Որ գլուխն առավ, հապճեպ հետ փախավ,
Է-էրը, ախպեր, այդ ուր մնացին,
Որ Ա-յերով են բայերը, ավաղ:

Լեզվաբան այրե՛ր, ինչո՞ւ եք լռել,
Խեղաթյուրում են լեզուն մեսրոպյան,
Հայոց սուրբ լեզուն դարերն են կռել,
Ո՛վ է մեր լեզվին լինելու պաշտպան:
21 դեկտեմբերի, 2012 թ.

ԻՆՉ ԵՍ ԱՆՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆ

Ի՞նչ ես անում, Հայաստան,
Նոր լեզու ես ստեղծում,
Հայոց լեզուն պատվական
Այդ ինչո՛ւ և ես դու կեղծում:

Քո Էկրանից կապտաջինջ
Զավակներդ դերասան
Հրամցնում են լեզվախիճ
Ելույթներում այս ու այն:

Ի՞նչ նայում Ա, բերում Ա,
Աղավաղված լեզու՛ Ա,
Բայերինչուն Է-ն ու Ր Ա,
Մի թե լեզուն մեր այս Ա:
25 փետրվարի, 2013 թ.

ՍԻՐԱՎԱՆ ՍԵՎՈՒՆԻ (Վլադիմիր Վարդանյան)

Ծնվել է անցյալ դարի առաջին կեսին՝ Մայկոպի շրջանի Կու-
ծոսկոյե ստանիցայում: Մանկուց ժապեղ է տատի խնամքին:
Պատանեկան տարիներն անցել են Աբխազիայում: Ավարտել է
Օչամչիրայի շրջանի Հայկական Աթաբա գյուղի Միքայել Նա-
բանյանի անվան միջնակարգ դպրոցը: Դեռևս դպրոցում սովորելիս թղթակցել է Վրաստանում և Աբխազիայում լույս տեսնող
հայկական, ռուսական, արխագական և վրացական, հետագայում
նաև զինվորական թերթերին: Մովետական բանակում ծառայելուց
հետո աշխատել է Մուխոմի կաշվի-կոշիկ կոմբինատում որպես
բանվոր: Ավարտել է Երևանի պետական համալսարանի բանա-
սիրական ֆակուլտետի լրագրության բաժինը: Եղել է մայրենի
լեզվի և գրականության դասատու, վրացադիպի հայկական
հաղորդումների խմբագրության արտահաստիքային թղթակից
Աբխազիայում: 1975 թ. հունիսին կուսակցության Աբխազական
մարզկոմի բյուրոն հաստատել է նրան Աբխազական ինքնավար
հանրապետությունում «Մովետական Վրաստան» թերթի սեփա-
կան թղթակից և մասնագիտությամբ աշխատել է մինչև վրաց-
աբխազական պատերազմը:

Սիրական Սևունին հայերեն և ռուսերեն բանաստեղծություն-
ների և պատմվածքների 15 գրքի հեղինակ է, տպագրվել է Բեյ-
րութում, Լոս Անջելեսում, Կալուգայում, Մոսկվայում, Ռոստովում,
Թբիլիսիում, Երևանում և Կրասնոդարում լույս տեսնող թերթե-
րում և հանդեսներում, հայ գրողների Միության և ԽՍՀՄ լրա-
գրողների Միության անդամ է, նաև ՌԴ տիեզերագնացության
Ֆեդերացիայի Պատվավոր անդամ, պարգևատրվել է տիեզերքը
նվաճողների մեդալներով և Գազարինի անվան Պատվոգրով:
Հանդիսանում է «Համայնապատկեր» (ԱՄՆ) հանդեսի հատուկ
թղթակիցը Ռուսաստանում:

Սիրական Սևունու գրչին հարազատ է քնարերգությունը և հու-
մորը:

Հայկազ ՕԶԱՆՅԱՆ,
«Նոր լույս» գրական միավորման նախագահ

ԱՍՏՂԱՅԻՆ ԵՐԿԻՆԸ

Հաշտվել եմ ուզում տխուր բախտիս հետ,
Մոռանալ անգամ նվաստում ու վեճ,
Գնալ հեռուներ, գտնել արահետ,
Ապրել մեն-մենակ գազանների հետ:

Մտերիմ լինել արջին, աղվեսին,
Գուցե հաշտ ապրենք, հասկանաք իրար,
Քան թե մի կնոջ նայել երեսին,
Հայացքը տեսնել տիաճ, դիվահար:

Չեմ սիրել երբեք ես անմիտ կանանց,
Որոնք անարժան իրենց են գովում,
Կոպիտ են վարվում կողակից մարդկանց
Եվ արժանիքը իզուր փնտրում:

Երանի՛ նրան, ով կապրի խոհեմ
Կանացի, հանգիստ, ազնիվ կնոջ հետ,
Նման տիրուհուն ինչպե՛ս չգովեմ,
Որ նվիրյալ է սիրուն առնավետ:

Անուրջների մեջ զարուն է ծաղկում
Երկուստեք սիրո համադրությամբ վեճ,
Եվ վառվող աստղերի դռները թակում,
Որ անմար ժառ սերը բոցակեզ:

Կարոտ է սիրտս նման անդորրի
Յարտ իդձերիս որպես ավետիք,
Անսա տենչանքիս, իմ սիրո փերի,
Միասին թռնենք աստղային երկինք:

5 փետրվարի, 2013 թ.

ԳԱՐՈՒՆ

Զարթոնքի բոցով
Գարունն ավետվեց,
Արեգի շողով
Ծառս կանաչեց:

Աղափսիս եկավ
Հյուղերիս թառեց,
Յարս սրտացավ
Վիշտս փարատեց:

Թե կանաչ լինեն
Ծառերն աշխարհում,
Մերեր կծաղկեն
Վհատ սրտերում:

22 հունվարի, 2013 թ.

ՀԱՎԵՐԺ ՍԵՐ

Մերդ իմ սրտում,
Այնպե՛ս է մրրկում,
Այս լույս աշխարհում
Ո՛նց եմ դիմանում:

Հյուլեի նման
Գիտեմ, ես կայրվեմ,
Մերդ հավիտյան
Ինձ հետ կտանեն:

18 հունվարի, 2013 թ.

Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ խեղդամահ սպանությունը

1938 թ Հայաստանայց Եկեղեցւոյ սուրբ կեդրոն Ս. Էջմիածնի մէջ, հայ չեկիստներ խեղդամահ սպաննեցին Ամենայն Հայոց Խորէն Ա. Մուրադբեգեան (Տփղիսեցի) Կաթողիկոսը:

Վերջին 20 – 25 տարիներուն, Արցախեան Ազատամարտի ժայթքումն եւ Հայաստանի անկախութեան վերականգնումն ասոյն, պետական արխիւներու ազատ հրապարակման պայմաններուն մէջ, տակաւ կը բացայայտուին մութ ծալքերը Ամենայն Հայոց Կաթողիկոսի տմարդի այդ սպանութեան անլուր ողբերգութեան:

Երկար տասնամեակներ խորհրդային աղբիւրները լուրջօրն պահեցին Հայուն Հաւատքը խաչելու չեկայական այդ սրբապղծութեան դէմ: Պաշտօնապէս քողարկեցին ճշմարտութիւնը եւ փորձեցին մութի մէջ պահել պատմական այն ահաւոր փաստը, որ հայ ժողովուրդի հոգեմտաւոր գլխատման Ստալինեան տխրահռչակ մաքրագործումներու ծիրէն ներս, Խորէն Ա. Տփղիսեցիի խեղդամահ սպանութիւնը հանդիսացաւ 1930-ականներու երկրորդ կիսուն գործուած խորհրդայիններու մեծ ոճիրին ծանրագոյն արարներէն մէկը:

Միայն սփիւռքեան մամուլի էջերուն եւ որոշապէս Դաշնակցութեան մօտ կանգնած շրջանակներու կողմէ օրին մերկացուեցաւ գործուած սրբապղծութիւնը: Որոշապէս ատենի Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Ատրպատականի թեմի առաջնորդ Ներսէս Արք. Մելիք-Թանգեանի կողմէ բացայայտուեցաւ, որ 10 Ապրիլ 1938-ի լուսցող գիշերը, չեկիստներ մութը գործած էին Խորէն Ա. Մուրադբեգեանի Ս. Էջմիածնի ննջասենեակը եւ իր սնարին մէջ խեղդամահ ըրած Հայոց Վեհափառը:

Դաժան ժամանակներ էին. Խորհրդային Միութիւնը երկաթէ վարագոյններով աշխարհէն կտրուած մեծ ճամբար մըն էր. նոյն ճակատագրին ենթարկուած էր Խ. Միութեան լուծին տակ ինկած Խորհրդային Հայաստանը եւս, ուր թափանցելու եւ երկաթէ վարագոյնի ետին կատարուող բռնութեանց մարտնչաբարկութիւնը աշխարհը իրագրեցելու կամ լուսաբանելու անյաղափար էի դժուարութիւն կը դիմագրաւէին հաղորդակցութեան եւ գանգուածային լրատուութեան ոչ միայն խորհրդային, այլեւ արտասահմանեան միջոցներն ու մամուլը:

Նման տեղեկատուական շրջափակման պայմաններուն մէջ, խորհրդայինները բնական մահուան վերագրեցին Խորէն Առաջին Մուրադբեգեան Վեհափառի վախճանումը: Այդպիսով ալ թերեւս փակուէր թըղթածարքը: Բայց որովհետեւ նոյն շրջանին խորհրդայինները ձեռնարկած էին տասնեակ հազարաւոր պարսկահայատակներ գանգուածաբար Հայաստանէն վտարելու քայլին, անոնց շարքին դնելով պարսկահայատակ հայերը եւս, ակամայ արտօնած եղան նաեւ տեղեկութեան անհակակշռելի հոսքը դէպի արտասահման: Թաւրիզ հասնող պարսկահայ վտարանդիները ականատեսի եւ



ականջալուրի իրենց վկայութիւնները փոխանցեցին Ատրպատականի Հայոց Առաջնորդ Ներսէս Արք. Մելիք-Թանգեանին: Իսկ Հայաստանայց Եկեղեցւոյ քաջարի այդ հովիւը նման սրբապղծութիւնը ոչ ներդոն էր, ոչ ալ այդ մասին լուր մնացողը...

Շուտով Փարիզի մէջ հրապարակուեցաւ եւ սփիւռքահայ բոլոր հայաձախներուն մէջ անմիջապէս արձագանգ գտաւ Ամենայն Հայոց Հայրապետի նահատակութեան գոյժը:

Կատարուածը քաղաքական ոճիր էր, ըստ էութեան պետական ահաբեկչութիւն:

Ստալինի եւ Բերիայի մականին տակ շարժող խորհրդային ղեկավարութիւնը, ինչպէս գերեվարուած այլ ազգերու պարագային, նաեւ հայ ժողովուրդի եւ Հայաստանի նկատմամբ փորձեց եւ ամենէն բիրտ միջոցներով, անընդհատ առաջ քշեց խորհրդայնացման իր քաղաքականութիւնը: Շարունակ փորձեց Հայաստանի եւ հայութեան մէջ գտնել ինչ-որ «ազգայնական», «պուրժուա» եւ մանաւանդ... «դաշնակիստ» բան մը, որուն արմատախիլ մաքրագործումը պետական եւ, այսպէս կոչուած, կուսակցական իր շահերուն գերագոյն առաջնահերթութիւնը հռչակեց:

Քաղաքական եւ հասարակական այդօրինակ մոլեգնութեան հետեւանքով էր, ահա, որ խորհրդայինները դիմեցին նաեւ Հայուն Հաւատքը խաչելու քայլին՝ Ամենայն Հայոց Ազգընտիր Կաթողիկոսը խեղդամահ սպանելու սրբապղծութեան:

Առանձնակի դրուագ մը չեղաւ Խորէն Ա. Մուրադբեգեանի սպանութիւնը: Ձայն կանխեցին ոչ միայն քանդումն ու սրբապղծութիւնը Երեւանի թէ շրջաններու հայկական եկեղեցիներուն, այլեւ՝ հարիւրներով ձերբակալութիւնն ու տասնեակներով գնդակահարութիւնը գործող հայ եկեղեցականներու:

Քրեմլին որոշած էր խորհրդային աշխարհի տարածքին վերջ տալ Եկեղեցւոյ գոյութեան միայն խորհրդայնական կեդրոններու գոյատեւումը արտնելով, այն ալ պայմանաւ, որ անոնք ամբողջապէս խորհրդային քաղաքականութեան իլու-հնազանդ ու կամակատար սպասարկութիւնները դառնային:

Քաղաքակրթութեան ճակտին ամօթի խարան դարձած խորհրդային այդ քաղաքականութեան գոհ գնաց եւ Հայաստանայց Եկեղեցւոյ՝ Նահատակ Հայրապետը եղաւ Խորէն Ա. Մուրադբեգեան:

Այսօր արդէն հայրենաբնակ հայութիւնը եւս արժանի կը մատուցանէ Նահատակ

Հայրապետին: Ինչպէս Ս. Էջմիածնի Արխիներուն, նոյնպէս եւ Հ.Հ. Պետական Արխիւի պատասխանատուներուն կողմէ տակաւ լուսարձակի տակ կը բերուին Նահատակ Հայրապետին եղերական վախճանին մանրամասնութիւններն ու ծալքերը:

Նաեւ արխիւային նիւթերով ամբողջացած է ազգային դէմքը Խորէն Ա. Մուրադբեգեան Կաթողիկոսի, իբրեւ Ազգի եւ Հայրենիքի արժանաւոր Քաջ Հովիւի, որ խիզախաբար ընդդիմացաւ խորհրդային ճնշումներուն եւ, կեանքի գնով, մինչեւ վերջին շունչ մերժեց տեղի տալ խորհրդային կայսերապետութեան ծառայելու պարտադրանքին առջեւ:

Ալեքսանդր Յովհաննէսի Մուրադբեգեան էր առաջին անունը հայոց Նահատակ Հայրապետին: Ծնած էր 8 Դեկտեմբեր 1873-ին, Թիֆլիս: Աւարտած էր տեղւոյն Ներսիսեան վարժարանը եւ բարձրագոյն ուսման հետեւեալ էր Ջուիցերիոյ համալսարաններուն մէջ: 1897-ին, վերադառնալով Թիֆլիս, երգի ուսուցիչ կարգուած էր Ներսիսեան վարժարանին մէջ: 1901-ին ձեռնադրուած էր սարկաւագ, ապա նոյն տարւոյն Դեկտեմբերին աբեղայ:

Ազգային-հոգեւորական քաջ հովիւի ծառայութիւն մը եղաւ Խորէն Առաջինի եկեղեցական ողջ գործունէութիւնը: 1902-ին վարդապետ ձեռնադրուեցաւ Խրիմեան Հայրիկի կողմէ եւ Յունիս 1903-ին, երբ վրայ հասան հայոց եկեղեցւոյ պատկան կալուածներու բռնագրաւման ցարական հրամանագրի դժուար օրերը, Խորէն Վարդապետ առաջիններէն եղաւ, որ գլուխը կանգնեցաւ հայոց համաժողովրդական ըմբոստացումին: Իր այդ գործունէութեան համար ձերբակալուեցաւ ցարական իշխանութեանց կողմէ եւ արքայութեան Ռուսաստանի Օրէն թաղաքը:

1905-ին վերադարձաւ արքայութեան վերանորոգ թափով լծուեցաւ հոգեւորական ծառայութեան: 1907-ին, Խրիմեան Հայրիկի կոնդակով, Խորէն Վարդապետ ընդհանուր բարեկարգիչ նշանակուեցաւ Նոր Պալազէտի եւ Ծաղկաձորի շրջանի հայկական եկեղեցիներուն եւ իր ծաւալած ազգային-հոգեւորական անձնուէր գործունէութեան առ ի գնահատանք Եպիսկոպոս ձեռնադրուեցաւ 1909-ի դեկտեմբերին:

Առաջին Աշխարհամարտին, հայ կամաւորական գունդերու վիրաւոր զինուորներուն եւ արեւմտահայ գաղթականներուն հոգատարութեան փութացող Երեւանի Թեմի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի նախաձեռնողն ու նախագահը եղաւ: 1917-ին վճռորոշ դեր կատարեց Երեւանի Հայ Ազգային Խորհուրդի ստեղծման եւ գործունէութեան մէջ, մեծ նպաստ բերելով Հայաստանի անկախութեան կերտման հերոսամարտերուն մեր ժողովուրդի ոգեւորման գործին:

Համազգային պատասխանատուութեան

100

ոգիով սնած ու գործած հեղինակություն էր արդեն Խորեն Եպիսկոպոս Հայաստանի Հանրապետության շրջանին: Բրայդհանգամանքով այլ առաքուհեցալ Փարիզ, որպէսզի մերձեցում է համերաշխ գործակցութիւն առաջացնէր Խաղաղութեան վեհաժողովին հայկական պահանջները ներկայացնող հայկական զոյգ Աւետիս Ահարոնեանի եւ Պօղոս Նուպար փաշայի գլխավորած պատուիրակութեանց միջեւ:

1920-ի դեկտեմբեր 11-ին, օրուան Ամենայն Հայոց կաթողիկոս Գեորգ Ե. Սուրենեանցի կոնդակով, Խորեն Եպիսկոպոս արժանացաւ Արքեպիսկոպոսի տիտղոսին, իսկ 1923-ի մարտ 4-ին ընտրուեցաւ Ս. Էջմիածնի Հոգեւոր Գերագոյն Խորհուրդի նախագահ եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղապահ:

Խորհրդային կարգերու հաստատման առաջին տարիներէն իսկ, Խորեն Արքեպիսկոպոս բռնու պայքար մղեց Հայաստանեայց Եկեղեցւոյ դէմ կատարուող պոլշեիկեան ոտնձգութեանց դէմ: Հակառակ իր դէմ ծաւալած հետեւողական հալածանքներուն, իր վայելած անբասիր հեղինակութեամբ, Խորեն Արքեպիսկոպոս կրցաւ դիմագրաւել ամեն կարգի ճնշումները եւ 1932-ին, երբ նաեւ օրուան իշխանութեան դեկավար Աղասի Խանջեանի հետ սերտ գործակցութիւն հաստատած էր ի նպաստ Հայաստանեայց Եկեղեցւոյ պահպանման եւ պաշտպանութեան, Գեորգ Ե. Կաթողիկոսի վախճանումէն ետք Խորեն Առաջին Սուրադբեգեան ընտրուեցաւ Ամենայն Հայոց Կաթողիկոս:

Բայց խորհրդային խորշակը ոչ մէկ սրբութիւն կը ճանչնար եւ Աղասի Խանջեանին հետ «կերաւ» գլուխը նաեւ հայոց ազգընտիր կաթողիկոսին:

Անշուշտ Քրեմլինի հաշիւները շատ անդին կ'անցնէին Խորեն Առաջին Հայրապետի կամ Աղասի Խանջեանի անձերէն եւ անոնց ներկայացուցած ազգային ընդդիմադրութենէն: Քրեմլինի համար ամբողջ խորհրդային տարածքին եկեղեցին դատապարտուած էր քայքայման ու անհետացման, ինչպէս որ ազգերը պէտք է անհետանային աստիճանաբար: Հայաստանեայց Եկեղեցւոյ պարագային կար, սակայն, նրբերանգային այն նկատառումը, որ Ս. Էջմիածինը կը հանդիսանար տարագիր հայութեան հոգեւոր կեդրոնը եւ, իբրեւ այդպիսին, կրնար օգտակար զենք մը դառնալ խորհրդային արտաքին քաղաքականութեան ձեռքին արտասահմանեան երկիրներու մէջ խորհրդային ազդեցութեան տարածման ի սպաս տեղական լծակներ ապահովելու ուղղութեամբ: Հետեւաբար, հարկ էր Խորեն Առաջինի օրինակով հոգեւորականներէ գլխատել Հայաստանեայց Եկեղեցին, որպէսզի Չեկայի դրածոյ կղերով Քրեմլին կարենայ իր արտաքին քաղաքականութեան հաշիւն օգտագործելի զենքի վերածել Ս. Էջմիածինը: Խորհրդային այդ դաժան քաղաքականութեան դառնագոյն զինն էր, որ Խորեն Ա. Սուրադբեգեան Կաթողիկոս վճարեց իր կեանքով:

Հակառակ անոր, որ Էջմիածնի «գլխատման» Չեկայի գործողութեան մասին խորհրդայինները հետեւողականօրէն լռութիւն պահեցին եւ Հայոց Հայրապետին մահը բնական պատճառներու վերագրեցին, այսուհանդերձ չկրցան լռութեան մատնել սրբապիղծ «Հայրապետութիւնը» բացայայտելու Մեծի-Թանգեան Արքեպիսկոպոսին նոյնքան եւ աւելի հետեւողական, այլեւ յանդուգն ու անվեհեր ձայնը:

Հետեւանքը եղաւ, յատկապէս սփիւրքի

տարածքին, հայ ժողովուրդի ներքին պատկոտումին խորացումը:

Խորեն Կաթողիկոսի վախճանումը բնական պատճառներու վերագրող խորհրդային քարոզչութեան կամակատար հետեւողները, Սփիւրքի տարածքին, հակադաշնակցական պայքարի սաստկացման նոր շարժառիթ մը գտան: Նոյնիսկ Ս. Էջմիածնի մէջ 10 ապրիլ 1938-ին գործուած սրբապիղծ ոճրագործութիւնը բացայայտող ու դատապարտող Ատրպատականի Հայոց Էջմիածնական Առաջնորդին հետեւողական պնդումները հռչակեցին «դաշնակցական յերիւրանք»:

Իսկ Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը փաստօրէն մնաց թափուր աւելի քան ութ տարի: Խորհրդայինները Կաթողիկոսական Տեղապահ նշանակեցին Գեորգ Չօրեքճեան Սրբազանին, բայց ոչ կրցան Ազգային Ընդհանուր Ժողով գումարել, ոչ ալ համախոհութիւն առաջացնել իրենց կաթողիկոսական այդ թեկնածուին շուրջ:

Հայութեան պատակտումը շարունակուեցաւ նաեւ Երկրորդ Աշխարհամարտի աւարտէն ետք, երբ աշխարհաքաղաքական նոր պայմաններէն օգտուելով Քրեմլինի վարիչները ի վերջոյ կրցան, Գեորգ Զ. Կաթողիկոսի ընտրութեան համար, Ազգային Ընդհանուր Ժողովը գումարել տալ: Պատակտումը փնտռուեցաւ ալ շարունակուեցաւ, մինչեւ որ յանգեցաւ 1956-ի Մեծի տանն Կիլիկիոյ Կաթողիկոսական ընտրութեանց նախօրէին, ընթացքին եւ յետոյ թափ առած ներհայկական բռնու, մինչեւ իսկ եղբայրասպան արինահեղութեամբ բորբոքած պայքարին:

«Ազատ օր» օրաթերթ
Նյութը պատրաստեց Զ. Ա.-ն

Նորօրյա աղոթք

Ո՛վ հայրեր, ո՛վ պապեր, այս գավաթը խմում եմ, բայց առանց նվիրելու ձեր ոսկորներին: Եթէ դուք այս վանքերի տեղը, որոնցով լիքն է մեր երկիրը, բերդեր շինէիք, եթէ դուք սուրբ խաչերի եւ անդրանիւսի փոխարեն, որ սպառնեցին ձեր հարստությունը, զենքեր գնէիք, եթէ դուք այն անուշահոտությամբ տեղ, որ խնկրում է մեր տաճարներում, վառող ծխէիք, այժմ մեր երկիրը բախտավոր կլինէր: Մեր երկիրը չէին քանդի, մեր որդիքը չէին կոտորվի եւ մեր կանանց չէին հափշտակի... Վանքերից ծագեց մեր երկրի կործանումը, նրանք իլեցին մեր սիրտը եւ քաջությունը, նրանք ձգեցին մեզ ստրկության մեջ, սկսած այն օրից, երբ Տրդատը թողեց իր սուրը եւ թագը, վերցրեց խաչը եւ մտավ Մանյա այրը՝ ճգնելու... Ո՛վ, Հայոց հին աստվածներ, ո՛վ Անահիտ, ո՛վ Վահագն, ո՛վ Հայկ, նվիրում եմ այս բաժակը Ձեր սուրբ հիշատակին, դուք փրկեցեք մեզ...

Դալի-Բաբայի ճառը – Բաֆֆի

Արդեն 10 տարի, 110 տարի, 1010 տարի
Ես վախենում եմ՝ շատ եմ վախենում
Բյուրավոր ու բոլոր հավատացյալից,
Բյուրատեսք ու սոստ հավատացյալից:

Եթէ աստված էք,
Փչեցեք քնքանց բոլոր մոմերը,
Մարեցեք քնքանց կանթեղներն ամեն,
Հանգցեք քնքանց ջահերն այլազան,
Որ եղիցի լույս...
Եվ ոչ մի գավթում մի՛ ընդունեցեք
Նրանց մատաղը,
Որ իրենց չէ՛, այլ գողացված է:
Մերժեցեք քնքանց գոհն էլ խոստացյալ,
Որ գոհ չգնա ի նրա՝ հավա տը՝
Մաքուր վսեմը, անկեղծ անսոստը:

Ու թե աստված էք, ամո՛ւր փակեցե՛ք
Ձեր ականջներն էլ
Նրանց սողոսկուն աղոթքի դիմաց՝
Անգիր, ինքնահոս,
հաշվեկշռված այն աղոթքների,

Որով խաբույմ են ոչ իրենց, այլ ձե՛զ:
Եվ բավակա՛ն է,
հասկացե՛ք ընդմիշտ,
Որ աստծուն նույնիսկ հայիոյողները
Շատ աւելին են գերադասելի,
Վասնզի նրանց բարկացրել է
Ի՛նքը՝ հավա տը՝
Խոցված, արյունոտ,
Այրվող, ապտակված,
Ցաված, ճչացող
Մանուկ հավա տը,
Որ հալ յր դառնալու համար է ծնվել:

Ու եթե հա՛յր էք, մի՛ թողեք,
Որ սուտ հավատացյալներն
Ըսպանեն նրան:

Ինչքան էլ ծանր է մանուկ պահելը,
Մանուկ թաղելը ծա՛նր է ավելի՛:

Պարույր ՍԵՎԱԿ

Ոսկին թագավորելիս պահանջում էր, որ բոլոր նյութերը երկրպագեն իրեն: Նա թագավոր էր կոչում իրեն, որովհետև թագավորի պատկեր է եղել, և դրանով ամբարտապանում էր արծաթագործներին և ուրիշների վրա նա: Բոլորը եկան

երկրպագելու, բայց ցորենը չեկավ, ասելով. «Թող առաջ ինքը ոսկին գա ինձ երկրպագելու»:

Մխիթար ԳՈՇ

Եղիշե ՉԱՐԵՆՑ

Այդ մե՛նք ենք երևի այն ուղտը հաստակող,
Որ Հիսուսի առակին հակառակ –
Պիտի մտնենք՝ անգամ ասեղի նուրբ ծակով՝
Ապագայի դրախտը անարատ...:

Պատմության քառուղիներով

Պատմության քառուղիներով
մենք քայլել ենք երկար՝
Անդել, ցաքուցրիվ, անգաղափար,
Հին դարերից մինչև այս հանճարեղ ներկան,
Որ հուրհուրատում է մեր դեմ գալիքնափայլ:
Այն անգո առավոտից, երբ լեզենդական
Իր խարույկն է վառել մեր անգո նախահայրը,
Այս Մասիսի հանդեպ, այս անիրական
Արարատյան դաշտում, – որպես
գրույց անձայր մի
Տարածվել է ուղին մեր անպատմելի,
Անձայրածիր ձգվել դարերով ձիգ
Եվ գնում է այսօր ու երկարվում էլի
Դեպի ի՛նչ անհայտ ավեր ու գալիքներ անծիր...

Բայց ուղին մեր եղել է մի՛շտ մթին,
Եղել է անստույգ ու անփառունակ,
Տարածվել է անբոց ու անժպիտ՝
Ուրիշների փայլով շարունակ
Շառագունված – որքա՛ն, որքա՛ն աղետավոր...
Որպես անմիտ գրույց՝ մեզ պատմել են մի օր
Նախնիների մասին մեր փառապանծ,
Բայց օրերի հեռվում ես տեսնում եմ միայն
Ստրկություն, մոխիր, մոռացություն ու մահ
Եվ երկրային ընթացք մի անիմաստ...
Եվ ես, ահավասիկ, հին գրերով այս մեր
Իմ տողերը կոփող մի պոետ –
Ի՛նչ խոսքերով երգեմ ու ի՛նչ տենդով պատմեմ
Մեր անանցյալ անցյալը, մեր ընթացքը, որ էլ
Ո՛չ մի գուսան երգով չոգեկոչի հին փառքը
Ու կարոտով անմիտ ետ չնայի, –
Չպանծանա այլևս, որ առանց մեզ աշխարհը
Կլիներ պարտեզ մի ամայի...

...
...
Պատմության քառուղիներում
առաջնորդել են նախ
Մեզ նախնիներ անստույգ ու ոչնչատեսիլ,
Մոայլ հեռուններում անճանապարհ առկախ,
Որ իրենց մորթի հետ միասին
Տարել են բախտը մեր թավալզոր
Երկրներից երկիր, – օ, տառապանք երկար, –
Նշել են մեզ համար ուղի աղետավոր,
Եվ տոտեմը եղել է մեր – գայլ...
Օ՛, նախնիներ ր... Տեսնում եմ ահավասիկ. –
Հին դարերի խորքում, ուղիներով մոայլ,
Քաղցած, քոստո, անբուրդ, դեպի լյառը Մասիս
Քայլում է առապելյալ մեր գայլը...
Հենց առաջին օրից բզկտված են նրա
Նիհար կողերը – բյուր գազանների կողմից, –
Եվ կողերով կարմիր փառ քայլում է նա՝
Դեմքը տված գալիք փորձանքների հողմին: –
Որտեղի՞ց է եկել նա, այդ գայլը,
Եվ ինչու է արդյոք նա առաջին օրից
Մարափահար հայացքը հառած լուսնի փայլին՝
Աղեկտուր ռոնում իր սարսափը խորին:
Եվ նա գիտե՛ արդյոք, որ բզկտված գազանը,
Որ նշված է արդեն նրա ուղին
Ապագայի գրքում, – որ տարիներ հազար
Քայլելու է այդպես անուղի, –

Որ պատմության մոայլ քառուղիներում
Նա բազմաթիվ դարեր պիտի այդպես տանի
Իր բզկտված կողերը – դեպի ի՛նչ անհայտ հեռու,
Ի՛նչ արոտներ կարմիր ու արևանիստ...
Օ, չի եղել մեր գայլը պղնձյա
Եվ ոչ մարմարիոնյա, և ոչ անգամ քարե, –
Նիհար, կողերը լերկ, նա անցել է անձայր
Տափաստաններ, մինչև նա հանգիստ է առել
Այս Մասիսի հանդեպ անիրական,
Այս խորշակյալ, անդուր Արարատյան դաշտում,
Եվ՝ լուսնի դեմ նստած՝ նա երկար
Ռոնացել է իր վիշտը անկշտում, –
Ռոնացել է անձուկ իր տառապանքը,
Անասնական իր քաղցը, – և ռոնոցը նրա
Դարձել է հիմար մեր անարձագանք –
Ու դարերով հնչել մեր պատմության վրա...

...
...
Ապա առաջնորդել են մեզ տարիներ երկար
Արքաներ անժողովուրդ և գահագուրկ,
Ռոնոց փառքը՝ մեր հին մատյաններում երգած՝
Եղել է եղկություն ու քծնություն քսու: –
Օ, դո՛ւք, մեր վաղեմի առաջնորդնե՛ր,
Առապելյալ Հայկեր ու Տրդատներ բազում,
Իշխաններ անփառունակ, սին լոճերի ճորտեր,
Արքաներ անժողովուրդ ու գահագուրկ, –
Դո՛ւք, որ դարեր երկար, հազարամյակներ,
Ուրունների նման անկերպարանք
Ապրել եք ու կանգնել օղե ապարանքներ,
Օտար խարույկներից հայցել ոգու կրակ, –
Որ ամբողջ ձեր գոյության հազարամյակներում
Չեք ծնել և ո՛չ մի խոհ սերունդների համար –
Ո՛ր, ո՛ր պատմիչը ձեզ պիտի կարդա ներում,
Օ, դո՛ւք, անպտուղ պարտեզներ
ու խորաններ ամա...

...
...
Ապա առաջնորդել են մեզ տարիներ երկար
Ֆեոդալներ շվայտ ու իշխաններ չնչին,
Հազար երանգներով իրենց դեմքը ներկած, –
Եվ մեր անմահության ակունքները այն ջինջ
Պղտորել են ռիտով ու ոչնչությամբ,
Չնչին տենչանքների անխոհությամբ ոսին,
Փաթաթելով վզին մեր մի ճորտային շղթա,
Մերմանելով մեր ողջ ժողովրդի մասին
Ոչնչության սերմեր, անխոհության,
Թշվառ անհողության և աղապատանքի,
Եվ դրել են դեմքին մեր կնիքը գերության,
Մնել թշվառ կաթով ապաշնորհ կյանքի...

...
...
Իսկ նոքա՞, որ եկել են իշխաններից հետո, –
Վերջին ասպետները մեր խեղճության խորին,
Մնված նախնիների անհողության կաթով, –
Օ՛, վարդապետ Մինաս, կամ Իսրայել Օրի, –
Այն ի՛նչ տենչեր են վեհ, ու անխորտակ ու խոր,
Որ սերմանել էք չորս երկրներում օտար,
Եվ ո՛ր, և ո՛ր, և ո՛ր նպատակի շողով
Ձգտել եք կյանքը մեր անմիթար
Հանել ափունքներից այն սև ու ապերջանիկ,

Նշել սերունդներին ուղի պայծառ, –
Եվ ձե՛զ պիտի արդյոք մենք երգենք հիմա –
Ձեր ո՛ր խոհին, կամ ո՛ր երազանքին անճառ...
...Ահավասիկ ելած մեր լեռներից այն բարձր,
Ուր վառվում էր հույսի մեր խարույկը վերջին,
Շուրջը – խավար գիշեր ու մառախուղ մի թանձր,
Շուրջը – ժայռեր մոայլ ու բարդիներ վերձիգ, –
Ու թանձրացյալ մոժում – ապարանքներ ահա՝
Փոքրիկ, ողորմելի, խեղճ –
Իրենց մութ պատերում մի բուռ ոսկի պահած,
Եվ ո՛չ մի, ոչ մի մեխ, –
Ո՛չ մի կտոր երկաթ, կամ անագե շաղախ,
Կամ մարմարյա մի պուռ, կամ թեկուզ կիր,
Որ փորձության պահին անձրևներից միսար
Եվ իր ծուխը խառներ ըմբոստության երգին...

Ապարանքը – այսպես: – Իսկ ներքևում – խուղեր՝
Գետնափոր, ստորերկրյա, ցաքուցրիվ,
Թաղված գանգի պես խուլ, գանգի պես անուղեղ,
Կարծես մի խեղճ նախիր
Արածելու ժամին կայծակնահար՝ հանկարծ
Կրծկվել է ահից ու մոխրացել –
Եվ մնացել է տեղը մի մոխրաբույր զանգված՝
Դարերով անջրդի ու հողմածե՛ծ...
Եվ նոքա – մեր անդել առաջնորդները,
Այդ իշխանները եղի, այդ տերերը վերջին,
Ելել են գիշերով ու մենակ ճամփորդել են
Դեպի հյուսիս, դեպի հյուսիսային որջի
Արջերը սառցափրտ ու արնաթաթախ, –
Այդպես մեր գալն էր հին ճանապարհվում որսի՝
Հյուսիս, կողերը լերկ և անաստ...

Ես տեսնում եմ նոցա: – Իմ աչքերի առջև
Ահավասիկ իրենց եղի հասակով ամբողջ՝
Իրենց խուլ խուղերից ու լեռներից այն բարձր
Ճանապարհ են ընկնում՝ անուղի ու անխոհ: –
Ելած որոնելու հորիզոններ, գալիք
Սերունդների համար արահետներ ուղիղ –
Ի՛նչ են տեսնում նոքա ուրիշների տալի,
Այն ի՛նչ բերքեր երկրի ու բարիքներ հողի...
Այն ի՛նչ գանձեր արդյոք, ի՛նչ արգասիք ու բեռ,
Ի՛նչ ոսկիներ ոգու ու գորության...
Ո՛չ: Տանում են նոքա, որպես շնորհ առձեռն,
Կարավաններ ահի ու թշվառության: –

Ելած որոնելու գալիքների շավիղ,
Ապագայի ընթացք ու հորիզոն –
Նոքա կրում են լույս անանձնական ցավի
Ու հանգուցյալ փառքի մեռելային կավիճ՝
Հազարամյա մեր դեմքը երիզող...
Եվ անվավեր փառքի առապելյալ փայլով
Շղարշելով խեղճությունն հազարամյա –
Միջնորդել են նոքա հյուսիսում ու այլուր՝
Ներքինատիպ, զագիր ու զառամյալ...
Խոստացել են նոքա իրենց երբեք չեղյալ
Փառապանծ անցյալի անունով –
Առաջնորդել նոցա Երկիրը Ավետյաց՝
Հանում Որդու, Հոգու և հանուն Հոր...

123

...
...
Այսպես անցել ենք մենք անխոտ ու անգաղափար
Պատմության քառուղիներով, որպես միրած, –
Կտրել ենք երկար մի ճանապարհ
Եվ ճանապարհը մեր այս
Երբ է արդյոք, երբ է փայլատակել, օ, երբ,
Երբ է վաղվել լույսով գալիքնափայլ, –
Եվ ով, և ով է մեր ապագային տվել
Անխզելի ընթացք ու գաղափար...

...
...
Բսկ նրանցից հետո ահավասիկ իմ դեմ
Մի ձեռք, որ գործություն է տալիս գրչիս –
Մեր պատմության գրքից դարձնում է մի թերթ
Եվ բացում է էջը նախավերջին, –
Եվ հանդես են գալիս – անկերպարանք անդեմ –
Երեկվա մեր տերերը չնչին: –
Օ, վաշխառու ճորտե՛ր, հացկատակնե՛ր, մթին
Սերմանողներ քամու ու մուրացկանության, –
Մեզ ժառանգած գանձի, օ, վատնիչներ հետին,
Որ ավերում է հեռու ձեզ ապաստան գտած –
Կերտեցիք դղյակներ ու ապարանքներ,
Մեր անունից մորիկ սերմանեցիք –
Եվ այսօրվա ձեր խեղճ ոչնչությանն անգետ
Վերջին խարխալը մեր
Վաճառքի հանեցիք...

Եվ կործանվեց ձեր փառքը: – Ապարանքները ձեր
Միրածների նման անապատի
Անեացան մի օր – և ոչ մի ձեռք
Չդրոշմեց ձեր հետքը պատմության ճակատին...
Որպես փոշի – անցաք, որպես քամի,
Որ ոչ մի, ոչ մի մատան
Չի նշելու երբեք ձեր ցնորքը անհիմա
Իր էջերում անցինք ու անհատյալ...
Անեացավ ձեր փառքը: – Եվ այն, որ դեռ ունեք
Աշխարհի բոլոր հեռուներում –
Կկործանվի մի օր ամենուրեք
Եվ գալիք պայծառ օրերում
Ոչ մի գուսան էրբեք իր երգերում հնչել
Չի կարդա նգո վր անգամ ձեզ: –
Դո՛ւք, որ միայն ոգու խեղճություն էք ցանել
Եվ գալիքում – տխուր մոռացություն հնձել...

...
...
Բսկ ժողովուրդը, որ եղել է հանձարեղ,
Եղել է որմնադիր, եղել է կառուցող,
Քաղաքներ է շինել, պարիսպներ է շարել,
Կամուրջներ է գցել կոր զծով, –
Որ դարերի միջով մինչև այցն այս հասած՝
Կրել է մեջքի վրա իր,
Օ, եղևիկ տերե՛ր, գազիր ու բազմազան
Ձեր բնությունը բիրտ...
Ունի՛ արդյոք թեկուզ մի աննշան մասնիկ
Վաստակներում ձեր այս անքանքար –

Ժողովուրդը, որ իր աշխատանքն է ազնիվ
Ձեր սեղանին բերել՝ արնաքամ: –
Օ, ոչ: – Այդքն է նա իր ճորտային կյանքով,
Խոր խավարում՝ արև երագել, –
Եվ երգել է դարեր իր ռամկական հանգով
Իր խոհերը արդար ու վսեմ:
Ստեղծել է նա իր հեքիաթները, – և իր
Հնամյա վեպում հանձարեղ –
Իր ապագա կյանքի գաղափարը կարմիր
Եվ անմահ խորհուրդն է դրել:
Խոր գերության ներքո, այնուամենայնիվ,
Պատմության քառուղիներում ոլորապտույտ,
Պայքարել է ոգով, մաքառել է նա միշտ,
Եվ չի կորել դաժան տարիներում այն մութ: –
Խո՛ր գերության քարե կամարների ներքո,
Բռնության տակ հայրենի և օտար,
Նա մեր անապատ ոգու ստեղծարար բերքի
Ճանապարհն է հարթել անդադար:
Այդ ճանապարհն է, որ չնչին արքաների
Եվ բոլոր տերերի ոչնչությանն ընդդեմ –
Դարձրել է ոգին մեր – այնքա՛ն բերրի,
Ամեն ճորտության անընտել:
Այդ ճանապարհը ձգվում է ահավասիկ
Մեր օրերից մինչև միջնադարյան հեռուն,
Մինչև դարերը հին, ուր մենք հազի՛վ ենք
Պատմության ընթացքը տարբերում:
Քայլել են քարքարոտ այդ ճանապարհով
Գորշ, անանուն մարդիկ, գեղջուկ ճորտեր, –
Կրել են կոծբերում գաղափարներ գերող,
Ստեղծարար մտքեր, բոցե բառեր, որ դեռ
Չեն խոյացել երկինք, չեն ընդունել դեռ ձև,
Բայց կհառնեն մի օր կերպավորված, –
Օ, հանձարե՛ղ ոգու շեռ չբացված գանձե՛ր,
Եվ հանձարի հանքե՛ր ուղե չփորված...
Այս է տվել նրան ոգու անհուն կորով
Եվ այս է մեզ փառք սահմանել, –
Բայց կարո՞ղ էր արդյոք՝ կապանքներում գերող՝
Իր հուրը անեղձ նա պահել...
Արքաների օրով և իշխանների
Կքել է ճորտության կապանքներում նա լուռ,
Եվ անգաժներ բազում նա քշվել է գերի
Եվ գերությունը իր կրել է համր ու լուռ: –
Եվ գերության գրկում կեղեքող
Յուրաքանչյուր գերին՝ աչքը ահեղ մահի՝
Ծածկել է խեղճության թաղիքով
Իբրև անգին մի գանձ, իբրև ավանդ վերին՝
Իր հանձարեղ ոգու կրակն անշեշ,
Ստեղծարար այն հուրը, – և բոլորից թաքուն
Վառել է միայնակ, վախվրխելով, ինչպես
Հանցագործն է վառում իր լապտերը միգում:
Ջլատվել է այսպես ժողովրդի անեղը
Հավաքական հանձարը զարկիչներին հանդեպ, –
Եվ դարձել է ահա ժողովուրդը և ս,
Իր տերերի նման, անուղի ու անդեմ...
Բսկ ապա, երբ փոխվել է ընթացքը դարերի,
Երբ դարերում մարել է թիթեղյա,
Սակայն շլացուցիչ պորփյուրն արքաների –

Եվ արքաների տեղ ա՛յն
Ոսկի ն է նվաճել իշխանություն ու փայլ,
Բաժանել արյունոտ դափնիներ,
Պետություններ կանգնել,
ուր պճնություն ու փառք

Կարելի է գնել, –
Նա քշվել է կրկին նախիրների նման
Դեպի թիարաններն անհաց աշխատանքի,
Եվ վաստակել այնտեղ մինչև ի մահ՝
Ընտելացած արդեն անխնայություն կյանքի:
Եվ անհաց վաստակի այդ թիարաններում,
Ինչպես առաջ՝ դաշտերում ճորտության –
Վիճակվել է նրան մի կապարե հեռու
Կրկնակի տառապանքի և գերության:
Նրա գլխին շաչող այդ նոր խարազանը
Եղել է երկճուղ, ինչպես քիստ, –
Եվ վաստակը ոգու, որ սրբազան է –
Արգելված է եղել նրան միշտ:
Բայց առաջին անգամ իր գոյության չարքաշ
Հազարամյա ուղու ընթացքում –
Նա այստեղ է տեսել շողշողացող մի այգ,
Որ պայքարով է բացվում...

...
...
Եվ այսպես – պատմության քառուղիներով
Անցել ենք մենք անդեմ ու անգաղափար,
Շառագունված անվերջ ուրիշների հրով, –
Եվ մեր ճանապարհը անփայլ
Եղել է ճանապարհ ունայնության, մահի –
Եվ չե՛նք կարող այսօր ձեզ մեծարել
Օ, նախնիներ՝ ուր մեր խեղճ,
առաջնորդնե՛ր մեր հին, –
Մեր պատմություն անդեմ ու անհանձարեղ...
Ահավասիկ ելած ձեր աներազ քնից
Նգովում ենք մենք ձեր եղկությունը մթար –
Օ, կերտողներ չնչին մեր անհանձար հնի
Եվ հերոսներ ի անքանքար մեր պատմության...
Մոլորակի վրա այս խայտաբղետ,
Աշխարհի սկզբից մինչև վախճանը
Երևի առաջին ժողովուրդն ենք մենք,
Որ կամենանք անգամ – դավաճանել
Անկարող ենք փառքին մեր ու

պատմությանն անցած,
Ու կանգնած ենք ահա ապագայի հանդեպ
Զարմանալի թեթև, զարմանալի անդեմ՝
Մերկության պես տկլոր ու անանցյալ...
Այդ մե՛նք ենք երևի այն ուղուր հաստակող,
Որ Հիսուսի առակին հակառակ –
Պիտի մտնենք՝ անգամ ասեղի նուրբ ծակով՝
Ապագայի դրախտը անարատ...
Այդ մե՛նք ենք երևի այն հարուստը,
Որ անցյալի մեր այդ տկլորությամբ հարուստ –
Պիտի ր տակնգնեք մեր դարերի կորուստը,
Որ բոլոր տկլորներին ասանված է վերուստ...

1933 թ.

5 բան, որ ավելի կարևոր են, քան փողը

1. Մարդկային շփումները

Համբուրեք ինչ որ մեկին, նամակ գրեք, համեղ բան պատրաստեք
և կերեք սիրելիի հետ, զանգահարեք ընկերներին, սիրով զբաղվեք:
Հնուանիք, ընկերներ, ինչ կարող է լինել դրանից կարևոր:

2. Ֆիզիկական առողջությունը

Առողջությունը չի կարելի գնել, բայց կարելի է պահպանել՝
առողջ ապրելակերպ ընտրելով:

3. Հոգևոր առողջությունը

Սեփական անձի և շրջապատող աշխարհի հանդեպ առողջ

վերաբերմունք:

4. Կենսուրախությունը

Սա մի բան է, որ բոլորովին կախված չէ փողից: Կյանքով լի,
եռանդուն, ոգեշնչված մարդիկ վարակում են շրջապատին իրենց
կենսուրախությամբ:

5. Սեփական ուժերի վրա վստահ լինելը

Փողը կարող է լինել և չլինել, բայց սեփական անձի հանդեպ հար-
գանքն ու վստահությունը մշտապես ձեզ հետ է և ուժ է տալիս ելք
գտնել յուրաքանչյուր իրավիճակից:

Պերեստրոյկայի գաղտնի պլան՝ «Գողգոթա» օպերացիան...

«Անցյալը պետք է գիտենալ ոչ թե՛ պատճառով, որ այն անցել է, այլ որովհետեւ հեռանալով՝ այն չի կարողացել վերացնել իր հետեւանքները»
Միխայիլ ԺԱՆՆԵՅԿԻ

Անկախության ԳիւՆ...

Թարգմանչի ներածական խոսք



Մի շարք հանդիպումների ու զրույցների ընթացքում ինձ համար պարզ դարձավ, որ մեր ջանքերը եւ (ոչ միայն ռուսերենից հեռու) ընթերցող հայրենակիցներից շատերը տակավին տեղյակ չեն Մ. Լյուբիմովի՝ վերոհիշյալ «Պերեստրոյկայի գաղտնի պլանը՝ «Գողգոթա» Օպերացիան» (1) հոդվածից:

Հաշվի առնելով, որ հոդվածի փաստագրական կամ մտացածին լինելուց անկախ, այն ինքնին հրատապ իմացական հետաքրքրություն էր ներկայացնում, եւ օգտակար համարեցի այն թարգմանել հայերեն եւ որոշեցի ներկայացնել հայրենակիցներին ուշադրությամբ:

Սույն ներածականը, կարծում եմ, հարկ է սկսել ռուսերեն Википедия-ից արված հետեւյալ մեջբերումից (թարգմանությունը իմն է)՝

«... Միխայիլ Լյուբիմովը իր «ՊԵՐԵՍՏՐՈՅԿԱՅԻ ԳԱՐՏՆԻ ՊԼԱՆԸ՝ ԳՈՂԳՈԹԱ ՕՊԵՐԱՑԻԱՆ» – հոդված-միստիֆիկացիան հրապարակեց 1995 թվականին՝ «Սովերշեննո Սեկրետնո» թերթում, ինչը աղմկոտ սկանդալի պատճառ է դարձել:

Հոդվածում նախկին չեկոստի անունից պատմվում է (վերակառուցման-պերեստրոյկայի իբրեւ ԿԳԲ-ում մշակված) «Գողգոթա» ծածկանունը կրող գաղտնի պլանի մասին:

Պլանի էությունը հետեւյալն էր.

Երկիրը պետք էր հասցնել վայրի կապիտալիզմի քառասյին հորձանուտ, ժողովրդին ապացուցելու համար սոցիալիստական օգտարկարգի անվիճելի առավելությունները, այնուհետեւ, հասարակարծելով զանգվածների դժգոհությունը, վերադառնալ նախկին (սոցիալիստական) կացութաձեւին:

Այս տեքստը շատերի կողմից ընկալվեց որպես ԿԳԲ-ի քաջատեղյակ աշխատակցի խոստովանանք, բանը հասավ նույնիսկ նրան, որ [նյութի հավաստիության վերաբերյալ] Պետդումայի անունից՝ պաշտոնական հարցում ուղարկվեց հատուկ ծառայությանը: (Википедия. Михаил Любимов) <http://ru.wikipedia.org> (<http://ru.wikipedia.org/>)

... Обрядился в демократа Брежневский «пират»,

Комсомольская бригада

Назвалась программой «Взгляд»...

Перестроиться не сложно,

Только вот ведь в чем беда:

Перестроить можно рожу,

Ну а душу – никогда.

«Игорь Тальков: (из песни «МЕТАМОРФОЗА-2»)»

Ինչքան շատ ենք հեռանում 1988-ից, այնքան ավելի ու ավելի՝ անցած-գնացածը երազ է թվում. հետաքրքիր, բայց՝ խորհրդավոր, պերճախոս, բայց անավարտ, հաճելի, լավատեսական սկիզբ, ու՝

խառք, մի տեսակ՝ ցավալի, անցանկալի շարունակություն ունեցող, դառն ու անախորժ՝ երազ (գոնե՝ մեզանից ոմանց համար)...

... Հիմա էլ շատ պարզորոշ հիշում եմ, որ 1988-ի ամենակզբում, փետրվարյան հանրահավաքների ոգեշունչ օրերին, ես չէի կարողանում ձերբազատվել այն տագնապալի զգացումից, թե ինչ-որ գերհզոր ուժեր, մեզ, իբրեւ մարիոնետների՝ օգտագործում են իրենց գողբալ խաղերում:

Շատ շուտով (բառացիորեն՝ ամիսներ անց), շրջապատում արդեն գրեթե չկար վերլուծությունների ու մտորումների հակում ունեցող որեւէ մեկը, որ համոզված չլինեք, թե ծավալվող բուն իրադարձություններն ընթանում են նախօրոք մշակված, շատ բարդ, բայց եւ՝ շատ կոնկրետ սցենարով: Իհարկե որոշակի վկայություններ կամ շոշափելի փաստեր, որոնք կապացուցեին այս «հիպոթեզը», ոչ մեկը չունեւ, բոլոր վարկածները սուս էլ գրահանգումներ էին, հիմնված մի քիչ պատմական փորձի, մի քիչ արտաքին աշխարհի մակերեսային երեւոյթների, իսկ ավելի շատ՝ երեսացող՝ ընթացիկ դեպքերի, ու դրանց տրվող գնահատականների տեսական-սիրողական վերլուծությունների վրա:

Ավելի համառոտ. Այդ ամենը հիմնվում էր միայն սառը դատողության վրա:

Ինքներդ դատեք. Հանկարծ, երեկվա կուսերիտական ակտիվիստը, որը, ոչ ավել - ոչ պակաս՝ ԵՊՀ-ի ֆակուլտետի կոմսոմոլի քարտուղար էր, օրը ցերեկով, բազմահազարանոց հանրահավաքի առջեւ բառիս բուն իմաստով հայեցում է ոչ ավել - ոչ պակաս հանրապետության գաղտնի ոստիկանության (այսինքն ամենակարող ԿԳԲ-ի) պետին, երկրի վարչապետին, ռազմական պարետին եւ այլն, ու՝ օճարմանք, հաջորդ իսկ օրը, նույն այդ երիտասարդը, նույն տեղում, ողջ-առողջ նույն բանը կրկնում է էլ ավելի թունդ տոնայնությամբ:

Նմանատիպ զարմանահրաշ ներկայացումները, որտեղ ժամերով ծաղր ու ծանակից մինչեւ հայեցողականներով ու նզովքներով հագեցած ելույթներ էին հղվում օրվա պետական իշխանության կառույցներում բարձրագույն ու միջանկյալ պաշտոններ զբաղակցող կոմկուսակցական ու սովետական չինովնիկների հասցեին, կրկնվում էին օրեցօր:

Բնականաբար, ներկաներից ոչ բոլորն էին հավատում, որ այդ շատ բարձրագույն, աշխույժ, վտիտ ու կոլտ կոմսոմոլը, ինչպես նաեւ հավաքների մյուս կազմակերպիչները ամեն օր՝ նախաճաշին, ճաշին ու ընթրիքին՝ առյուծի սիրտ էին ուտում...

Բայց միտինգային բազմության համար այնքան հաճելի ու ցանկալի էր այդ ջանքեր ավանտյուրիստի հայեցողականի տարափն ու ատելության մաղձը, որ հիմնական զանգվածը չէր էլ ուզում խորանալ կասկածելի մանրամասների մեջ. ինչպես նաեւ չէր ուզում ինքն իրեն հարց տալ, թե ինչ հրաշքով եւ ինչու պետք է ոստիկանության շարժակազմերը խրախուսեն ջանքերով գիշերային կրքոտ բողոքի երթերն ու հակակառավարական հանրահավաքները:

Իհարկե, որոշ «խելքներ» երբեմն ձգնում էին կարկամ ու անհեթեթ բացատրություններ տալ...«Իմբ»...

Նախօրոք մշակված, բարդ, բայց եւ՝ կոնկրետ սցենարի մասին վարկածները միայնակից հիմնականում տարբերվում էին նրանով, թե մեզնից, այսինքն այդ տնայնաբույժ «վերլուծաբաններից», ով ում, այսինքն, ինչ ուժի էր վերագրում այդ խրթին սցենարի հեղինակային իրավունքը:

(Ի միջի այլոց, հնարավոր «սցենարիստների» հիպոթետիկ ցուցակը բավականին ընդարձակ էր, այն ընդգրկում էր գաղտնի ու հայտնի տարբեր կառույցների՝ սկսած «սինիստներից», «մատոններից» ու ամերիկյան ԿՀԳ-ից, վերջացած «պան-թուրքիզմով», «պան-իսլամիզմով», ու ռուսական, ավելի ճիշտ, այն ժամանակ, դեռեւս, խորհրդային ԿԳԲ-ով):

Իսկ ընդհանուրն այն էր, որ այդ «կարծեցյալ» «սցենարիստներից» ոչ մեկի շահերը, փաստորեն, չէին համընկնում մեր՝ հայերիս շահերի հետ, ու վերլուծությունների արդյունքում արվող գրեթե բոլոր կանխատեսումները հոռետեսական էին, այսինքն նույն ոչ հայանպաստ արդյունքին էին հանգում:

143

Բայց, արի ու տես, որ ի՛ գարմանս եւ՝ հուրախություն մեզ, դա՛ չէր կոտորում որեւէ մեկի՝ պայքարելու վճռականությունն, այլ՝ ընդհակառակը, ավելի էր բորբոքում բոլորի խելահեղ պատրաստակամությունը՝ կռվելու ... թեկուզ ... ամբողջ աշխարհի դեմ:

Արդյո՞ք մենք էինք խիստ անպատրաստ, կամ անհամբեր, թե՞ որովհետեւ խաղն այդպես էր մտածված, հիմա է՛լ չեմ կարող վստահորեն ասել, սակայն մի բանում համոզված եմ, որ մեր՝ հավաքական իմաստով՝ հայության, եթե իհարկե կարելի է պայմանականորեն այդպես ձեռակերպել, բոլոր քայլերը ուղղակի միակ հնարավոր քայլեր էին, մենք ուրիշ էլք չունեինք, քան շարժվել այդ անհայտ ու առեղծվածային «սցենարիստի» գծած «ճանապարհային քարտեզի» հիման վրա:

Այսպիսով, բոլորս պատրաստ էինք՝ ակամա, ընդունել մարտահրավերը, ու՝ ակամա, ... խաղալ մեզ համար անհայտ ու անորոշ պայմաններով այդ խաղը ...:

Չեմ կասկածում, (եւ՝ փառք Աստծո, որ այդպես է), թե՛ չնայած մեր տված բազմաթիվ զոհերին, այսօր էլ դեռ ապրում են շատերը, ովքեր դեռեւս 1989-90 թթ-ին. արդեն կոահում էին, որ ինչպես Մոսկվայի «ռեֆորմատորների» այնպես էլ տեղական չուբայսա-գայդարային շոկո-թերապևիստների՝ ՀՀԸ-ի առաջնորդների, ժողովրդավարության, մարդու իրավունքների ու ազատությունների մասին հնչող կրակոտ ճառերն ու ճռճռան կարգախոսները՝ սոսկ դեմագոգիկ հեքիաթներ էին:

Այսօր արդեն պարզ է, որ՝ ինչպես եւ նախատեսված էր, դրանք լուծեցին երկու խնդիր.

Առաջին. 70-ամյա «խորհրդավոր» նիրհից հանկարծ զարթնած վեր-թառձ գանգվածի «թթից»՝ հարմար բռնելու եւ, առանց շոշափելի բարդությունների, նրան, այդ գանգվածին, ոնց որ ռուսն է ասում՝ – «до последней нитки» (մինչեւ վերջին թելը)՝ քրտալքելու նպատակով, – դեպի կլեպտոկրատական «կըզարան» քարշ տալու խնդիրը:

Երկրորդ. Ազատ աշխարհի «թթից» հարմար բռնելու եւ նրան խաբել, հիմարացնելու խնդիրը, թե՛ տեսեք-տեսեք մենք արդեն գիտենք, որ մարդակերությունը՝ վատ բան է, արդեն pseudo-(կեղծ) սոցիալիզմի ծաղիկ իջել ենք ու, էլ, ոչ՝ միայն, ոչ էլ՝ ձեզ, չենք պատրաստվում խժոճելու:

(Ասենք, ինչ վերաբերվում է երկրորդ մասին, իհարկե «ազատ աշխարհի» գիշատիչները հաճությամբ իրենց բաժինը ավարդ առան. ու «հիմարացած» ձեռացան բայց դե, դա արդեն ուրիշ կինոյից է, որին հիմա չենք անդրադարձնա...)

Շենց այդ ժամանակ էր, որ տեղի էր ունենում գանգվածների համակրանքը վայելող, նրանց ոգեշնչման առիթը հանդիսացող ու երկրի քաղաքական դեկին անշրջելիորեն հավակնող ՀՀԸ-ի, աստիճանական կերպարանավորման ու այլասերման նախապես պլանավորած գործընթացը, որի արդյունքում այն պիտի վերածվեր համայն հայության Հիմարացման Հանելուկային Շարժման՝ և Հայաստանի Հանրապետության իսկապես ինքնիշխան ու անկախ պետականության կայացման խնդիրը անորոշ ժամանակով հետաձգեր, դնելով իրենց գործած մեղքերով ու հանցագործություններով ծանրացրած տիտանական այդ բեռը գալիք սերունդների ուսերին:

Այդուհանդերձ, մի տեսակ ինտուիտիվ մակարդակի ֆանտաստիկ վստահություն կար բոլորիս մեջ, գուցե, առայն, որ Աստվածային ինչ-որ հրաշք-ձեռնարկների ու մեր ժողովրդի ոգեղեն վճռականության շնորհիվ, ի հեճուկս բոլոր տեսակի բացասական-ռեալիստական կանխատեսումների ու տրամաբանական աննպաստ մոդելների, մեզ հաջողվելու է օգտվել աշխարհի հզորների հակաառություններից՝ ու արդյունքում հաղթելու ենք, ... «մեկ է, ... մեր հաղթանակը անխուսափելի է...»:

Եվ դա, անկեղծ ասած, ամենից հիասքանչն ու զարմանալիս էր...

P.S. Բ դեպ, նաեւ, արդեն այդ օրերին էր, որ ուշադիր դիտորդները, հետեւելով երկրի քաղաքական դեկավարման թակնդրին տիրացած եւ օրենսդիր ու գործադիր մարմինները վերից վար գրաված դատարկագլուխ, բայց ավանտյուրիստ ու ճարպիկ ստախաներին, արդեն զարմացած կրկնում էին (ոմանց ասելով՝ իբր թե՛՝ Վանոյի) արտահայտությունը, թե՛՝ «Լեբայր, դեռ բոլորովին վերջերս հանրապետությունում հաշված թվով անառակ կար, բա լավ, էսքան նմանների տղերք մեզ մոտ որտեղից ց հայտնվեցին...»:

Բսկ գուցե՛ Մ. Լյուբիմովի այ հռոչվածը ինչ որ չափով կպատասխանի տրված հարցին ... *** ... А вокруг, как на парад, Вся страна шагает в ад Широкой поступью...» ... Игорь Тальков (из песни «РОДИНА МОЯ»)

Վերջաբանի փոխարեն ...

Ոչ շատ հեռու անցյալում հրապարակաձև՝ «Հիշել, թե չի՞շել» հոդվածում ես մի հարց էի շոշափել, որը, ըստ էության, բաղկացած էր երկու մասից.

Ինչպե՞ս բացատրել այն հանգամանքը, որ՝

– ա) շատերը հսկայական ջանք ու միջոց են ներդնում, վերականգնելու համար անհիշելի ժամանակներում տեղի ունեցած, (կամ չունեցած) իրադարձությունների ու երեւոյթների, անգամ՝ աննշան մանրամասները.

Մինչդեռ՝ մե՛նք,

– բ) մենք հաճախ՝ մատը-մատին չենք ուզում խփել՝ պարզելու համար հենց երեկ գլխներիս եկած վթարի «ուղևուծուծը» [տությունը]:

Ինչու՞ ...:

«Պատմական ժամանակաշրջանի» առումով, բառացիորեն՝ «երեկ», մեզ հետ տեղի ունեցած սարսափելի՝ կատակլիզմների ու զայրացուցիչ մետամարֆոզների վերաբերյալ հրապարակվող սակավաթիվ վկայություններն ու փաստերը չեն ենթարկվում պատշաճ վերլուծության, չեն քննարկվում անհրաժեշտ մանրակրկիտությամբ:

Շատ հաճախ, ընդհակառակը, այս ամենը, անթաքույց դիտավորությամբ, լողվում է ու հրվում-զցվում՝ անլուծելի առեղծվածների շարքը:

Եւ, որ ամենակետին է, ոչ հեռու անցյալում տեղի ունեցած այդ ձեռակերպ ավերածությունների ու նողկալի կողոպուտի՝ կազմակերպիչներն ու իրագործողները, ոչ միայն չեն ստանում արժանի պատիժը, (որը պետք նշանակել ավագանների թալանածի բռնագրավում ու նրանց ազատագրելու), այլեւ չեն ստանում գոնե՝ իրենց արժանի քաղաքական գնահատականը:

Ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ այսօր առանց ֆինանսական միջոցների անհնար է որեւէ բնույթի քաղաքական պայքար վարել:

Դեռ հետևանքով, նրանք, այդ չարագործները, գործի դնելով ժողովրդից գողացած ու պետական զանձագողությամբ կուտակված իրենց հարստությունը, հենց սկզբից ձեռք գցելով պետական կառավարման դեկը, մեկընդմիջտ, անբաժանելիորեն տիրում են նաեւ ընդդիմադիր քաղաքական դաշտին:

Միխայիլ ԼՅՈՒԲԻՄՈՎ

«Գողգոթա» օպերացիան...» իրողություն էր, թե՛ միստիֆիկացիա...

1983 թ.-ի փետրվարյան մոայլ երեկո էր. ես հեռատեսիլ էի դիտում: Ժամանակները խաղաղ էին այդ օրերին, թեպետ մթնոլորտը ներքծված էր մի տեսակ զուսպ սպասումով:

1982-ի նոյեմբերին մահացել էր Բրեժնևը եւ Անդրոպովը ընտրվել էր Կենտկոմի Գլխավոր Քարտուղար: Հնչեց հեռախոսազանգ, օրվա ընթացքում դրանք շատ էին: Բայց երբ վերցրի հեռախոսափողը եւ լսեցի զանգահարողի ձայնը, անորոշ հուզմունք գգացի:

Հեռախոսափողում հնչեց .

– Բարի երեկո, Միխայիլ Պետրովիչ, չճանաչեցի՞ք:

– Ներեցեք, տեղը չեմ բերում, – պատասխանեցի չոր (չեմ սիրում երբ չեն ներկայանում):

– Մի՞ թե չեք հիշում ձեր ներկայացրած վերլուծական գրությունները կանխատեսումներով:

Զրուցակիցս կարճատեւ դադար տվեց, հնարավորություն ընձեռելով ինձ՝ շոկային վիճակից դուրս գալու:

– Յուրի Վլադիմիրովիչ, դու ք եք ...

Այդ էր պակաս... Ինչպե՛ս կարող էի մոռանալ այն չարաբաստիկ գրությունները, չէ որ ամեն ինչ սկսվեց հենց դրանցից: 1980-ին ես դեկավարում էի ՊԱԿ Գլխավոր Վարչության Կանխատեսումների բաժինը (ներկայումս այն վերանվանվել է Արտաքին Հետախուզության Բաժին):

Շենց իմ՝ Անդրոպովի ցուցումով, իմ բաժնում սկսվեց ԽՍՀՄ-ի զարգացման բոլոր հնարավոր տարբերակների վերլուծական կանխատեսման գործընթացը՝ արեւմտյան ամենաժամանակակից հաշվիչ մեքենաների կիրառմամբ: Գործի էին դրվել ոչ միայն ՊԱԿ-ի,

Պաշտպանության նախարարության, (հատկապես՝ Գլխավոր Հետախուզական Վարչության), Պետ-Պլանի ու Նախարարների խորհրդի ինֆորմացիոն համակարգերը, այլ նույնիսկ երկրի սուրբ-սրբոցը հանդիսացող Կոմկուսի Կենտկոմի Կառավարման Ավտոմատ Համակարգը (ACY- ԱԿ КИСС):

Աշխատանքներում կիրառվում էին ամերիկյան եւ հայրենական ամենաժամանակակից մեթոդները, ծրագրերում հաշվի էին առնվում արտաքին ու ներքին բազմափառ գործոններ, որոնց ազդեցությունը վճռորոշ էր ԽՍՀՄ զարգացման գործում:

Որոշ տարբերակներ դեն նետելուց հետո, արդյունքում, իմ սեղանին մնաց տասը տարբերակ. դրանք բոլորը ավարտվում էին՝ երկրում լիակատար քաղաքական ու տնտեսական աղետով, եւ ոչ մի բարենպաստ էլք:

Խոստովանում եմ, որ դա ինձ համար անսպասելի էր: Ոչ առանց որոշ տարակուսանքի, ես փոխանցեցի փաստաթղթերը վարչության պետին՝ Վլադիմիր Ալեքսանդրովիչ Կրյուչկովին, որը պահանջկոտ, սակայն արդարամիտ մարդ էր: Վլադիմիր Ալեքսանդրովիչը փաստաթղթերը իր մոտ պահեց երկու շաբաթ, (ինչը խիստ հազվադեպ էր պատահում), եւ վերջապես, հոգոց հանելով՝ դրանք վերադարձրեց ինձ:

– Դուք անձամբ կզեկուցեք Նախագահին, – սառը հրահանգեց նա:

Ակնհայտ էր, որ Կրյուչկովը չէր ցանկանում ինքն իրեն հարվածի տակ դնել, չէ որ հայտնի բան է՝ Ռուսիայում գույժը տեղ հասցնող լրագրողներին միշտ էլ գլխատում էին:

Արդեն հաջորդ օրը Յասենեվոյում գտնվող մեր շտաբ-բնակարանից ես մեկնեցի Լուբյանկա, նախագահի ընդունարանը: Նա ինձ նորմալ ընդունեց, արտակարգ ուշադրությամբ լսեց, չնայած, անկեղծ ասած, ես սպասում էի տուր քննարկման ու նույնիսկ, ավերիչ քննադատության՝ վատ կանխատեսումների համար: Նա լուռ էր, սակայն բարյացակամ ճանապարհեց ինձ: Եվ հենց այդ էր պատճառը, որ ես խիստ զարմացա, երբ երկու շաբաթ անց ինձ կանչեցին կադրերի վարչություն ու ազատեցին աշխատանքից՝ աշխատանքի տարիները լրանալու պատրվակով:

Ընդ որում, Անդրոպովի ստորագրած հրամանի համաձայն, ես դուրս էի նետված ՊԱԿ-ռեզերվից ու նույնիսկ զրկված էի գերատեսչական պոլիլինիայից օգտվելու իրավունքից, ինչն արդեն արտասովոր դաժանություն էր ...

– Միխայիլ Պետրովիչ, հիմա իհարկե ուշ ժամ է, սակայն չէի՞ք կարող, արդյոք, ինձ մոտ գալ:

– Իհարկե, Յուրի Վլադիմիրովիչ, – անմիջապես պատասխանեցի ես:

(Հուզմունքից սիրտս սկսեց շատ արագ բաբախել. էլ ուրիշ ի՞նչ կերպ կարձագանքեր թողնալուի մեկը, որին աղբախոց են գցել, ու մեկ էլ հանկարծ...), – ուղիղ Լուբյանկա պիտի գա մ:

– Ոչ, Կոլպաչնի: Կոնսպիրացիայի նկատառումով՝ մեքենա չեմ ուղարկում: Մոտոցեք, հետեւներիցդ հո՛ւ՝ «պոչ» չկա: Լա՛վ:

– Ճիշտ այդպես, Յուրի Վլադիմիրովիչ, – երկարամյա ծառայությունը հետախուզությունում սովորեցրել է ինձ խուսափել ավելորդ հարցերից, մանավանդ՝ հեռախոսով:

Սոցիալիստական երկրների հետախուզական ծառայությունների ղեկավարների հետ անցկացրած բանակցություններին մասնակցելու նպատակով, ես շատ էի եղել Կոլպաչնի նրբանցքում գտնվող ներկայացուցչական առանձնատանը, որտեղ մի ժամանակ ապրել էր «СМЕРШ»-ի շեֆը, Ստալինի մահից հետո գնդակահարված Վիկտոր Սեմյոնովիչ Աբակումովը:

Մի ժամ անց ես արդեն սեղմում էի առանձնատան մուտքի կոճակը: Ի խորին զարմանա ինձ, դուռն իմ առջև բացեց ինքը՝ Անդրոպովը:

– Չեք սառել, – նա մեղմ ժպտաց:

Մենք անմիջապես անցանք երկրորդ հարկ, ընկուզենու փայտից պատրաստված կահույքով ու գրքերով լի գրապահարաններով կահավորված առանձնասենյակ, տեղավորվեցինք բազկաթոռներում: Յուրի Վլադիմիրովիչը անմիջապես միացրեց սառնվարը եւ բուֆետից հանեց չորաբլիթներն ու գալեթները:

– Դեհ, ինչպե՞ս եք ձեզ գգում թոշակի անցած վիճակում:

– Ոնց ձեզ ասեմ, այ՝ պոլիլինիայից էլ դուրս գցեցին:

– Ես գիտակցաբար աշխատեցի ձեզ չեկիստական միջավայրից մեկուսացնել, – Անդրոպովը ժպտաց, – Դուք ինձնից հո շատ չե՞ք նեղացել:

Ես լռեցի:

– Դե, այդ դեպքում ներեցեք ինձ: Դուք հասկացա՞ք, ձեզ ինչի համար ազատեցին:

– Կարծում եմ, կանխատեսումներիս պատճառով, – ուղիղ պա-



տասխանեցի ես, ակնկալելով փոթորիկ:

– Ձեր հիմնալի կանխատեսումների, – ուղղեց Անդրոպովը, անասելի զարմանք պատճառով ինձ: – Ավելի սարսափելի բան ես երբեւէ չէի կարողացել, դրանից հետո անկեղծ ասած, մի քանի օր չէի կարողանում քնել: Մալկայն, դրանք վերջ դրին իմ վարանուժներին: Ելք չկա: Դուք պատրա՞ստ եք կատարելու արտակարգ կարեւորության իմ առաջադրանքը:

– Անկասկած, – պատասխանեցի ես՝ միանգամայն անկեղծ, քանի որ, ազնվորեն պետք է խոստովանեմ՝ միշտ աստվածացնում էի Անդրոպովին:

– Ես այս հարցը ձեռի համար տվեցի, – ժպտաց Յուրի Վլադիմիրովիչը,

– Փառք Աստծո, ձեր կյանքի ու ձեր տրամադրությունների մասին ես ամեն ինչ գիտեմ: Գուցե ավելին, քան, նույնիսկ, դուք ինքներդ: Այս վերջին մասի վերաբերյալ, ես կասկած չունեմ: Թոշակից հետո շուշափելիորեն զգացի, որ ակտիվագույնա «մշակման» եմ ենթարկվում, բնակարանս «լսում են», ու կյանքս ամբողջապես վերահսկվում է արտաքին դիտարկմամբ:

– Այն ամենն ինչ կանխատեսել էիք, սարսափելի ճշմարտություն է, – շարունակեց Անդրոպովը: – Այդ գործընթացը անշրջելի է, դեռ Լեւ Դավիդովիչ Տրոցկին էր կանխատեսում կուսակցության քայքայումը ու թերմիդորը: Մեր ձեզ հետ միասին, ռազմավարական խնդիրն է վերականգնել իրական սոցիալիզմը, ձերբազատվելով անցյալի բոլոր ևստվածաշնչերից:

– Իսկ դուք վստա՞հ եք, որ դա է պետք մեր ժողովրդին, – հարցրեցի ես, որոշ գաղափարական հանդգնություն դրսևորելով:

– Ես համոզված եմ նրանում, որ այս երկիրը ստեղծված է հանրության կուլեկտիվ համակեցության (ապրելակերպի) համար: Ժողովրդի մեծամասնությունը կարող է ապրել ոչ այլ կերպ, քան միայն ի հաշիվ եռանդուն ու տաղանդավոր փոքրամասնության: Անհնար է ստիպել, որ այս զանգվածն աշխատի: Ավելին, այն անմիջապես սկսում է խռովվել: Ո՛րն է ելքը: Ոչնչացնել համարյա ամբողջ ժողովրդին: Բայց դա ստալինյան (ստալինականություն) է: Մնում է միակ ելքը՝ ստեղծել նոր հասարակություն:

– Ներեցեք ինձ անկեղծության համար, Յուրի Վլադիմիրովիչ, բայց ձեր առաջին քայլերը՝ որպես գլխավոր քարտուղար, իմ կարծիքով, չնչին չափով անգամ ուղղված չեն դրան: Մի թե կարծում եք, թե անբաններին փողոցներում որսալով ու աշխատանքի գալու ժամը խստորեն հաշվառելով, մենք կորդենք մարդկանց սոցիալիզմի կառուցմանը: Իսկ օդու գնի իջեցման մասին ձեր որոշումը, որ ժողովրդականություն նվաճեց զանգվածների մոտ ...

– Ցիսիկ կ է, – հարցրեց Անդրոպովը ժպտալով:

– Այո, – բռնկվեցի ես: – Ձեզ համար պարզվեց մեր ռազմավարական նպատակը, սակայն դուք առայժմ չեք հասկացել, թե որոնք են դրան հասնելու ուղիները: Համակարգը մեռել է, այն վերականգնել հնարավոր չէ, եւ դրա կարիքն էլ չկա. ինչնեղի ու է պետք կենդանի դիակը:

Խնդիրը հետեւյալն է՝ պետք է վերջնականապես ոչնչացնել այն, եւ նրա փոխարեն կառուցել իսկական սոցիալիզմ, որին կատարելորդ ժողովուրդը: Ողջ ժողովուրդը, ընդ որում՝ ազատ ընտրություններով:

– Խոստովանում եմ, որ այնքան էլ լավ չեմ հասկանում ձեզ, Յուրի Վլադիմիրովիչ: Արդյոք դա, այսինքն՝ ժողովրդի սոցիալիստական էությունազմին հավատալը, վտանգավոր «մանիլովչիսնա» չի (անգործության մատնող անիմաստ ու երազկոտ ինքնախաբեություն):

– Այ՛ հենց էստեղ է, որ մենք անցնում ենք օպերացիայի բուն ելույթին: Սոցիալիզմի հանդեպ սերը մեզ մոտ կա՞ծի ու կհասունանա՞ կապիտալիզմի նկատմամբ ատելությունից: Դրա համար ձեզ հանձնարարվում է կազմել ԽՍՀՄ-ում կապիտալիզմի ներդրման ծրագիր, ընդ որում ոչ թե փափուկ, շվեդական սոցիալ-դեմոկրատական բնույթի:

160

Մենք պետք է երկիրը գցենք վայրի, սանձարձակ կապիտալիզմի գիրկը, որտեղ տիրում է ջունգլիների օրենքը:

Նախագահը ուշադիր նայեց ինձ:

– Ես ամեն ինչ հասկացա, Յուրի Վլադիմիրովիչ: Բայց արդյո՞ք դա շատ մեծ փորձության չի վերածվի մեր ժողովրդի համար:

– Իհարկե, անասելի մեծ, սակայն ուրիշ էլ չկա: Մի թե դուք գտնում եք, որ մեր խղճուկ քարոզչությունը ի վիճակի է աստեղծություն արթնացնելու կապիտալիզմի նկատմամբ: Միայն սեփական փորձը. որպեսզի զգաս գաթայի համը, պիտի այն ուտես – դա դեռ պապաշա Ֆրիդրիխն է գրել [նկատի ուներ Էնգելսին]: Ձեր տրամադրության տակ եմ դնում իմ բոլոր ծածկագրերը, լուսժների, արտաքին դիտարկումների իրավունքը եւ անհրաժեշտ գործակալական ցանցը: Բնականաբար, թե այստեղ, եւ թե՛ արտասահմանյան բանկերում մեր ունեցած հաշիվները: Դուք այդպես էլ կմաք ստվերում, քողարկափնջոցները ինքներդ կընտրեք, ըստ հանգամանքների... Հավանում եմ իմ սիրած չորաբլիթները, Միխայիլ Պետրովիչ: Դուք կարծես ոչինչ չեք ուտում ...

Յուրի Վլադիմիրովիչը ակնոցների տակից ակնոցներ նայում էր ինձ:

– Այո, իմ ուղեղը արդեն պտտվում է այն հարցի շուրջ, թե ինչպես լավագույնս սա կազմակերպել ..., – հանուն քաղաքավարության, վերցրի չորաբլիթն ու սկսեցի այն թեթեւակորեն կրծել:

– Դե ինչ, թող պտտվի, իսկ մի ամսից, երեկոյան ուղիղ ժամը 9-ին ես ձեզ կսպասեմ այստեղ, օպերացիայի վերաբերյալ նախնական ուրվագծերով: Յուրի Վլադիմիրովիչը գրկեց ուսերս (նման բան երբեք չէր եղել) ու աստիճաններով տարավ ներքե:

– Ինչ հետաքրքիր նորություն կա մեր մշակույթում, – հարցրեց նա շարժման ընթացքում, ցանկանալով ազատել մեր գրույցը որոշ պրոֆեսիոնալ միապաղաղություններից:

– Վերջերս նայեցի «Ռազմաճակատը՝ Թշնամու Թիկունքում» ֆիլմը, – նկատեցի ես, – նկարահանված Սեմյոն Կուզմիչի (ՊԱԿ-ի նախագահի տեղակալ Յվիգունի) վեպի հիման վրա: Տիխոնովը շատ լավ էր այնտեղ:

– Վայշեւալվը «Ռազմաճակատի...» համար հատուկ մրցանակ ստացավ Տալիտում՝ Համալուրիթենական 15-րդ կինոփառատոնում: Մենք էնտեղ Գաբրիլովիչին ու Յուսկեվիչին էլ մրցանակներ տվեցինք լենինյան թեման Էկրանում մարմնավորելու համար: Ինչքան հակասական է աշխարհը. Եւ՛ր՝ Շտիրլիցը, Եւ՛ր՝ Լենինը, Էկրանի վրա լրիվ ֆիկցիա են, լիակատար կեղծիք: Իրական կյանքում ոչ մի նման բան չի եղել:

Մահ քեզ ողջ համակարգի արժեքը: Յուրի Վլադիմիրովիչը դուռը բաց արեց ու ես փողոց ելա:

Թող ների ինձ ընթերցողը, բայց էթիկական բնույթի նկատառումներից ելնելով, ստիպված եմ գործակալների իրական անունները չհիշատակել, նաեւ, շրջանցել զուտ պրոֆեսիոնալ տեխնոլոգիաներին վերաբերող մանրամասները: Յուրի Վլադիմիրովիչի հետ զաղտնի հանդիպումներ ես ունեցել եմ մինչեւ նրա մահը, իմ կյանքում, իրապես, ամենատխուր օրը. օպերացիան մանրակրկիտ մշակվում էր, պլանը նա ստորագրեց մեռնելուց փոքր ինչ առաջ:

Օպերացիայի՝ որի ծածկանունն էր «Գողգոթա», պլանը տրոհվում էր չորս մասի.

1) գոյություն ունեցող քաղաքական-տնտեսական կառուցվածքի համակարգված կազմաքանդում,

2) հեղաշրջում եւ «վայրի տեսակի» կապիտալիստական համակարգի հարկադիր ներդրում,

3) քառսի ու անտերության ուղղորդված տարածում, որպես՝ իշխանության դեմ գազազած զանգվածի պայքարի մոբիլիզացիայի միջոց՝ սոցիալիստական լոզունգների ներքո,

4) ողջ ժողովրդի կողմից օժանդակության արժանացած սոցիալիստական հեղափոխություն, կոմպարտրային բուրժուազիայի եւ նրա հետ կապված քաղաքական-տնտեսական կառուցվածքների ռադիկալ ոչնչացում:

– Իհարկե, ես կարող էի արդեն հիմա դե՛ն նետել բոլոր հարգելի դիմազավրերին՝ Եւ՛ր Չեռնենկոյին, Եւ՛ր Գրիշինին, Եւ՛ր Սոլոմինցեին, Եւ՛ր Շչերբիցկուն՝ Կունաեւի հետ միասին. սակայն մեր պլանը պետք է ապուշության որոշ երանգ ունենա: Ամեն դեպքում, առաջին փուլում անհրաժեշտ է այդ թանկագին ծերուկներին պահպանել ղեկավարությունում. դա ժողովրդի մեջ կբորբոքի կիրքը դեպի բարեփոխումները. մենք նրան (ժողովրդին), կարծես, կպահենք զուգարանում, որտեղ մինչ այդ ինչ որ մեկը արդեն ահագին ջանք է թափել:

Ընդհանրապես, որոշ իմաստով, առաջին՝ ամենից պատասխանատու փուլն է, քանի որ մենք պետք է կյանքի կոչենք այն ուժերին,

որոնք հիմա խոր ընդհատակ են մտցրած:

Ըստ էության, ինչո՞վ է տարբերվում սոցիալիզմը կապիտալիզմից. կապիտալիզմը, ժողովրդավարություն ու ազատություն հռչակելով՝ ազատություն է տալիս մարդկային բոլոր ամենամութ բնագոյներին, իսկ հոմո-սապիենսը, հարգելի Միխայիլ Պետրովիչ, ի դժբախտություն բոլորիս, շահապաշտ է, եսանդ, ստոր եւ բոլորովին ընդունակ չի կոլեկտիվ համակեցության:

Գործող համակարգում, մենք կոշտ ու ծայր աստիճանի՝ անհմուտ, ճնշեցինք հոմո-սապիենսի ստոր հոգին մամլիչի մեջ՝ այդ պատճառով էլ, հավատացե՛ք ինձ, բավական է փոքր-ինչ բացե՛ք փականը, եւ ամբողջ կեղտը անմիջապես կպոռթկա ամենավերել:

– Բայց, այնուամենայնիվ, ո՞վ կզլխավորի առաջին էտապը, – հարցրի ես Յուրի Վլադիմիրովիչին, չնայած, արդեն, մանրամասն աչքի անցկացնելով ԳԵՆՏԿՈՄ-ի ԱՀԿ-ից (Ավտոմատ Համակարգման Վարչություն) ստացած խիստ գաղտնի «անձնակազմի» ցուցակը մոտավորապես պատկերացնում էի այն հովատակներին, որոնց վրա նա պետք է գրավ դներ:

– Ինչքան բախտավոր ենք, որ գործնականում մեր համակարգում չկան կրթված քաղաքագետներ ու տնտեսագետներ. բոլոր ԲՈՒՀ-երում սոցիալիզմի (որը՝ ինչպես ձեզ քաջ հայտնի է, մեզ մոտ՝ չկա) քաղաքատնտեսության, դասավանդումը, լիովին ձեւախեղել է մեր, նույնիսկ, ասենք՝ Ադամբեկյանի կամ Շատալինի նման հայտնի ակադեմիկոսների ուղեղները. մի ամբողջ սերունդ կպահանջվի, հասկանալու համար տնտեսության էությունն ընդհանրապես, եւ շուկայականը՝ մասնավորապես:

Մեր երկրում՝ քաղաքականություն նույնպես չկա. քաղաքականություն համարվում են անդրկուլիսյան ապարատային ինչ-որ խաղեր:

Այսպիսով առաջին փուլը կղեկավարի Գորբաչովը, ում ես վաղուց եմ պատրաստում այդ դերի համար՝ համեմատաբար երիտասարդ ու պատվախնդիր մարդ է (նկատեք, որ ես ընդհանրապես տանել չեմ կարող այն զինվորներին, որոնք չեն երագում գեներալ դառնալ, այդպիսիք տեղ չունեն քաղաքականությունում.), Դուբչենի՝ «մարդկային դեմքով սոցիալիզմի» տիպի շատ գրավիչ գաղափարներով: Ի դեպ, հիշում եք չե՞ք, թե ձեզ հետ միասին, ինչ փառահեղ ձեռով խեղդեցինք այդ «պրահյան գարունը»:

Գորբաչովին շատերն են քննադատում՝ պնդում են թե՛ շատախոս է, անվճռական:

Առաջինի առթիվ՝ կառարկեմ. իսկ ինչ է, Ցիցերոնը շատախոս չէ՞ր. մի թե դա խանգարում էր նրա իբրեւ քաղաքական գործչի, ժողովրդականությանը: Ինչ Ցիցերոն. վերցրեք թեկուզ մեր Իլլիչին: Համեմատաբար կարճատեւ. կյանքի ընթացքում նրա ելույթներն ու գրվածքները ինչքան մեծ ծավալ են կազմում:

Ընդհակառակը, ամբողջ պատմությունը ցույց է տալիս, որ ժողովուրդը պաշտում է շատախոսներին, որոնք խոստանում են կաթնառատ գետեր ու երկնային մանանա: Ինչ վերաբերվում է անվճռականությանը, դա նույնպես զազրախոսություն է. Ուղղակի, Միխայիլ Սերգեևիչի ընկալմամբ, քաղաքականությունը տարբեր խմբավորումների միջեւ անվերջ մանևրելն է, ինչը միանգամայն բնական է խորհրդային կոփվածքի քաղաքական գործչի համար:

– Համաձայն եմ, Յուրի Վլադիմիրովիչ: Բացի այդ, Գորբաչովը մեր հայթաթղթերից միակն է, ում արեւմուտքը կարող է ընդունել: Նա հողակապ վարվելակերպ ունի, միշտ եվրոպականի վայել հագնված է, կարծես, միակ թերությունը՝ իր բոլոր ենթականերին «դու»-ով դիմելն է... – Բավականին նուրբ դիտարկում էր, Միխայիլ Պետրովիչ. Բայց «դու»-ի առթիվ մի անհանգստացե՛ք. անգլերենում «դու»-չկա, ու այդ անվիճելի թերությունը ոչ մի չափով չի անդրադառնա մեր գլխավոր գործընկերոջ՝ ԱՄՆ-ի հետ ունենալիք հարաբերությունների վրա:

Ի դեպ, դուք մոռացաք Ռախա Մաքսիմովայի մասին: Պետք է խոստովանեմ, որ մեր բոլոր երիտասարդ առաջնորդների կանանց մեջ ամենից ավելի նա է ինձ դուր գալիս, իր նրբագեղությամբ ու ճաշակով, ու հենց դա էլ կկործանի Գորբաչովին. չէ՞ որ մեր ժողովուրդը տանել չի կարող առաջնորդների գեղեցիկ հագնված կանանց:

– Այնուամենայնիվ, Յուրի Վլադիմիրովիչ, ես դեռ որոշ չափով տատանվում եմ... Արդյոք, ավելի լավ է՝ ինչից ց սկսել առաջին փուլի բարեփոխումները:

– Մի ձեւացրեք, թե անուշադիր եք, Միխայիլ Պետրովիչ, ես ինքս արդեն հիմնականում նախանշել եմ դա: Ընդ որում այնքան լուրջ, որ նույնիսկ Վլոդյան (այդպես նա անվանում էր իր հավատարիմ օգնականին՝ Գրյուշկովին – հեղ.) հավատաց աշխատանքային կար-

գապահության փրկարար դերին ...

– Յուրի Վլադիմիրովիչը ուրախ ծիծաղեց, ու ես ակամա գոհունակություն զգացի նրա՝ փոքր ինչ վարդագույն երանգ ստացած դեմքի առթիվ:

– Գորբաչովն ու իր ողջ կորիզը պետք է անմիջապես վարկաբեկեն կուսակցությունը Ռուսաստանի համար ամենաապուշ ձեռնարկով՝ ակոհով զրկելով դեմ պայքարով: Ուրախալի է, որ Միխայիլ Մերգելիչը չի չարաշահում այն, իսկ այ Լիգայովը, չնայած պառփ կենսակերպի կողմնակից է, բայց երբեմն սայթաքում է. սակայն ազնվագույն մարդ է, հենց նրա ուսերին էլ կորվի հակաակոհողային կամպանիայի քարոզչությունը, եւ հետեւաբար, կուսակցության լիակատար վարկաբեկումը:

Հիշեք, Միխայիլ Պետրովիչ, հարբեցողության դեմ պայքարը չպետք է լինի թղթային, ինչպես մեզ մոտ կուսակցությունում ընդունված է.

Պետք է արմատախիլ արվեն խաղողի այգիները, պետք է կազմաքանդվեն գինու-օղու գործարանները. կուսակցությունից հանել է աշխատանքից դուրս վոնդել, նույնիսկ դատել է ու բաժնի նստեցնել փողոցում անաթափ վիճակում հայտնվելու համար:

«Գողգոթայի» սկիզբը պետք է նշանավորվի ծայրահեղ իդիոտիզմով – դա չափազանց կարեւոր է:

Այստեղ էլ մենք բաժանվեցինք: Յուրի Վլադիմիրովիչի մահը 1984-ի փետրվարին կրճատում է սիրտս մինչ այսօր:

«Գողգոթայի» իրականացման համար բարենպաստ նախադրյալներ ստեղծելու նպատակով, (չէ՞ որ գիշերն ինչքան խավար է, այնքան աստղերն ավելի պայծառ են), իշխանության ղեկին դրվեց Չեռնենկոն, ով, տարին չըրացած՝ մահացավ:

1985 թվի ապրիլյան Պլենումը մենք լրիվ անց կացրինք «Գողգոթա» ծրագրին համապատասխան: Գլխավոր քարտուղար ընտրվեց Գորբաչովը:

Դեռեւս Չեռնենկոյի օրոք, 1984-ի դեկտեմբերին, Մարգրեթ Թեթչերի հետ հանդիպմանը՝ Գորբաչովը ներկայացնում էր ԽՍՀՄ-ը Անգլիայում:

Նրա համար համապատասխան միջազգային համբավ ստեղծելու նպատակով, եւ, օտար անվան տակ, նախօրոք մեկնել էի այնտեղ, անգլիական կառավարությունում ու արքունիքում՝ ՊԱԿ-ի ազդեցության գործակալական ցանցի հետ հանդիպումների: Անգլիային մենք սովորաբար օգտագործում էինք խորհրդային առաջնորդներին վարկաբեկելու համար՝ օրինակ ժամանակին այնտեղ գործուղվել էր Ալեքսանդր Շելեյինը, ՊԱԿ-ի նախկին շեֆը, Բրեժնեվի մրցակիցը, որին, մեր օգնությամբ, ընդունեցին հզոր հակախորհրդային ցույցերով, ինչը բնականաբար այնքան խարխուլեց նրա դիրքերը, որ շուտով նրան հանեցին Քաղբյուրոյից:

Քանի որ մեր մեթոդը հայտնի էր դարձել անգլիական հատուկ ծառայություններին, ստիպված էինք գնալու լրիվ հակադարձ գործողությունների:

Մադամ Թեթչերին ներշնչել էին, թե Գորբաչովի հասցեին արտասանած նրա բարի խոսքերը կնպաստեն Քաղբյուրոյի վերջնական կազմալուծմանը, ու կխարխլեն խորհրդային իշխանությունը, ինչի առթիվ նա անչափ ուրախ էր, եւ այդ պատճառով ամենամիայնուն ձեռով գովազդեց Գորբաչովին:

1985 թվականի ապրիլյան Պլենումն, ինքնին, անցավ առանց որեւէ անսպասելիությունների: Բիարկե ծերունիների խումբը, որը Գրիշինի վրա էր գրավ դրել, բավականին խլորաց, սակայն երեք առաջնորդների իրար հաջորդած մահերը թույլ չտվին Կենտկոմի՝ նույնիսկ ամենաթուլամիտ անդամներին, տրամադրվել նրան սատարելու: Պլենումում մեծ դեր խաղաց Գրոմիկոն. նախապես, մեր գործակալական ցանցի միջոցով, նրան անընդհատ հաղորդվում էր, թե Գորբաչովը շատ մեծ ուշադրությամբ է վերաբերվում նրա ունեցած փորձառությանը ոչ միայն արտաքին, այլեւ՝ ներքին քաղաքականության մեջ (Գրոմիկոն երկրից բոլորովին տեղյակ չէր, եւ հաճախ էր զարմանում Քաղբյուրոյում, որ որոշ քաղաքներում միս չկա) ու հույս ունի հենվելու նրա վրա:

Այսպիսով, երկրի գլուխն անցավ Գորբաչովը, նրան գերազանց աջակցում են Լիգայից ու Ռիժովկը, որը, բարեբախտաբար, իրեն համարում է լավ տնտեսագետ, ինչպես եւ բոլոր մեր տնօրենները, որոնք կարողանում են միայն կենտրոնից փող ուզել եւ աջ ու ձախ հրամաններ տալ: Առայժմ պարզ չի, ուր շարժել Շելեյի անձնակազմը, որ բոլոր վրացիների պես էմոցիոնալ է:

Ինչպես երեւում է, նրա ուսերին պետք է դնել Արեւմուտքի հետ հարաբերությունները՝ կարելի է պատկերացնել, թե ինչ տպավորություն կստեղծի այդ պոռթկուն վրացին արեւմուտքի սառը պրագմատիկներին մոտ:

«Գողգոթա» Օպերացիայի Իրականացումը ԳՈՐԾԱԿԱԼԱԿԱՆ ԽՄԲԻ ԶԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Յեղիսակի օրագրից /Միխայիլ Լյուբիմով/ ԳԿԶՊ-ն (ԴԿԿՊ) նախատեսված է եղել «Գողգոթա» ծրագրով եւ անձամբ Անդրոպովի կողմից հաստատվել է, որպես երկրորդ փուլի անցնելու չափորոշիչ միջոց:

Այդ սուր գործողության իրականացումը դրվել էր Կրյուչկովի վրա, որը պետք է ԳԿԶՊ-ի նախագահի պաշտոնը առաջարկեր Բորիս Նիկոլայեվիչին:

«Վոլոդյան հոյակապ կազմակերպիչ է, – ասում էր Յու.Վ.-ն, – սակայն նա միայն հեղափոխությունները ճնշելու փորձ ունի (նկատի ունեւ 1956-ին Հունգարիայի դեպքերը, որտեղ Կրյուչկովը աշխատում էր դեսպան Անդրոպովի հետ), եւ չունի հեղաշրջումների փորձ:

Այդ պատճառով խնդրում եմ նրան հսկողության տակ պահեք, թե չէ՝ ամբողջ գործը կտապալի»:

Այդպես էլ եղավ, ապարատային դպրոցն իր դերը խաղաց: Փոխանակ միանգամից նախագահի տեղը առաջարկեր Ելցինին, Կրյուչկովը ԳԿԶՊ-ի խումբի մատնված մյուս անդամների ճնշման տակ, սկսեց ամեն ինչ հանդարտեցնել ու համաձայնացնել Գորբաչովի հետ:

Այստեղ մենք բախվեցինք կատարելապես նոր երեւոյթի՝ չնայած Մայիսակ Տան [խոսքն իհարկէ՝ Մոսկվայի Սպիտակ Տան մասին է] ու Կրեմլի միջեւ առկա սուր հակասություններին, ոչ ոք չէր ուզում առձակատման գնալ ու միմյանց հետ հարաբերություններ փչացնել: Ելցինը գրում էր. «Ես կարծում եմ, եթե Գորբաչովը Ելցին չունենար, նա ստիպված պիտի լիներ հորինելու մեկին... Ես կկոչվեմ Գորբաչովի համար»:



Սակայն համաձայն «Գողգոթայի», Գորբաչովն այլևս պետք չէր: Օգոստոսյան այդ օրերին իմ ենթականերից ոչ մեկը չքնեց: Մենք սլանում էինք Կրեմլից Սպիտակ Տուն, եւ ետ, բոլոր ուժերով փորձելով նրանց հարաբերություններն ավելի սրել: Առանց կեղծ համեստության պիտի խոստովանեմ, որ ես՝ անձամբ կազմակերպեցի օպերացիայի գլխավոր խթանը. նստեցրի Ելցինին տանկի վրա, եւ նրան հիշեցրեցի, թե որքան վճռական էր գործում Իլյիչը:

Չէնց այդ ժամանակ էլ Ելցինը ԳԿԶՊ-ին օրենքից դուրս հայտարարեց, դրանով իսկ խիստ վախեցրեց բոլորին, եւ դարձավ դրության տերը: Իմ երկրորդ քայլ նույնպես հաջող ստացվեց. ես գրագրեցի Բորիս Նիկոլայեվիչի հետ՝ մի արկղ ժիգուլեյան զարեջրի վրա (ի դեպ, նա տանել չէր կարողանում արեւմտյան արտադրության զարեջրը), որ Գորբաչովը չի լուծարի կոմկուսը, – այստեղից էլ Ելցինի ճնշումը Գորբաչովի վրա՝ Գերագույն Խորհրդի նստաշրջանում, ԳԿԶՊ-ի ձախողումից հետո, եւ վերջապես, կոմունիստական կուսակցությունն արգելող նրա հրամանը (նա բնականաբար իր զարեջրը ստանալու հույս ունեւ, բայց եւ նրան արդարացիորեն մատնացույց արեցի գրագի պայմանների խախտման փաստը):

Յու.Վ.-ը Վոլյպաչնի եկավ գտնվելով արդեն շատ վատ վիճակում, հրաժարվեց թեյից ու պառկեց թախտին:

– Ես ինձ ինչ որ լավ չեմ զգում: Փառք Աստծո, «Գողգոթայի» պլանն արդեն ստորագրել եմ. Բայց՝ բերեք ռեալիստ լինենք. ամեն

180

մարդու պես՝ ես էլ կարող եմ սխալվել ու ոչ ճիշտ կանխատեսում անել: Ավելին, ես համարում եմ հիմարություն «Գողգոթայի» յուրաքանչյուր կետի դրամատիկ կատարումը, մանավանդ երկրորդ ու երրորդ փուլերում, որոնք նշանավորվում են քառուսդ եւ անկանխատեսելիությամբ:

Մակայն ինձ համար միանգամայն պարզ է, որ Ելցինի օրոք վայրի ռեֆորմների անցկացումը պետք է դրվի մտավորականի վրա, ցանկալի է՝ հրեական ազգությամբ (չնայած իր իմաստաստությանն ու մտքի ճկունությանը, Յու.Վ.-ը հին դպրոցի «շրջանավարտ» էր, այնտեղ «հրեա» բառը համարվում էր անհարիր պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգուն), կամ աղավաղված մոտեցում ու անպետք ազգանունով մեկի վրա:

Հիմա ինձ համար դժվար է անուն տալ, բայց մեզ մոտ մեծ թվով գիտահետազոտական ինստիտուտներ են բազմացել՝ հենց էնտեղ էլ փնտրեք այդ տեսաբանին, դրանցից այնտեղ շատ կան, ու բոլորն էլ պայտեղ են սնապարծությունից: Նա պետք է սկսի ռեֆորմները, ու իր պես ոչ մի փորձ չունեցող «խելոքների» թիւ հավաքի:

Ինչի համար է դա անհրաժեշտ:

Յուրաքանչյուր գործնական փորձ ունեցող մարդ կսկսի դատել իր սեփական փորձից ելնելով, իսկ տեսաբանի համար խնդիրը շատ ավելի հեշտ է: Կվերցնի Հայեկի կամ նույնիսկ Ջոն Մոյուարս Միլի հատուկապես եւ տեղն ու տեղը այն կյանքի կկոչի: Ռեֆորմները պետք է լինեն կտրուկ եւ դաժան ժողովրդի առումով: Խորհուրդ եմ տալիս ձեզ վերընթերցել Օ'Հենրիին կամ Ջեյ Լոնդոնին: Նրանց մոտ ոսկի որոնողները շատ փառավոր կերպով միայնակ կոկորդ են կրծում: Մտավորականը մեզ պետք է նրա համար, որ հետագայում հեշտ լինի նրա դեմ ժողովրդի ցասում հրահրելը, ժողովուրդը անչէն հիմա էլ չի սիրում շյուպա ու ակնոցներ կրողներին: Այս ամենը պետք կլինի երրորդ ու չորրորդ փուլերում, խնդրում եմ զերծ պահել այդ ընկերներին մահապատժից, բայց պատժամիջոցի ժամկետը՝ պետք է լինի ոչ պակաս քան տասը տարի: Անհրաժեշտ է նաև պրագմատիկ-տնտեսավարներով, մի քիչ, «ջրիկացնել» տեսաբաններին, որպիսով...

Հիշու՞մ եք, Գոլդիլի մոտ ինչպես էր. «Մի անգամ կարապը, խեցեցտիկն ու գալյաձուկը ...»: Այ, դրանք էնպիսի շուկա կսարքեն, որ բոլորը վախից կոռնան!

ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ

ԱՐՏ.Ն490ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆՆԱԿԱՅՈՒՆԱՑՆՈՂ ԳՈՐԾԱԿԱԼԱԿԱՆ ԽՄԲԻ ՀԱԾՎԵՏԿՈՒԹՅՈՒՆԻՑ

Մեր կողմից ձեռնարկված միջոցների շնորհիվ Խորհրդային Միության պատմության վրա խաչ դրվեց, եւ երկրի ողջ զարգացումը ճանաչվեց որպես շեղում: Մկսվեց Մոսկվայում ու Լենինգրադում փողոցների ակտիվ վերանվանման գործընթացը (վերացված անվանումները վերադարձնելը նախատեսված է չորրորդ փուլում), սակայն այդ գործընթացը, չնայած մեր ջանքերի, օժանդակություն չստացավ գաղափարով:

Դա բացատրվում է նրանով, որ ժողովուրդը այնտեղ բավարար չափով կրթված չէ, շատերը գտնում են, որ իշխանության դեկին դեռ Լենինն է, ու չեն հասկանում, թե ինչի՝ համար է պետք առաջնորդի արձանները քանդել: Մեզ չհաջողվեց Գորկու, Մայակովսկու, այլ սոցեալիստների գրքերի հրապարակային հրկիզումներ կազմակերպել, մենք նաև որոշեցինք դամբարանից դուրս չհանել Լենինի աճյունը, Վոլկովյան գերեզմանոցում թաղելու նպատակով, այլ մշակեցինք մի քանի միջոցառումների շարք, որոնք պիտի զանգվածներին ավելի հեղափոխական վիճակի հասցնեին: Մենք մեծ հաջողության հասանք հեռուստատեսությունում, շնորհիվ զանազան պրեզենտացիաների ու ամերիկյան գովազդների լայն հեռարձակման, ինչը սնանկացած ժողովրդի վրա ճիշտ այն ազդեցությունն ունի, ինչ՝ կարմիր գույնը ցույլ վրա:

Մեր մշակած մեթոդի համաձայն կտրուկ աճեց ԱՋՍՏՈՒԹՅՈՒՆԵՆ ԵՎ ԴԵՄՈՂՐԱՏԻՍՄ բառերի օգտագործման հաճախությունն ու շարունակական կրկնությունը: Արդյունքում հասարակության մեծ մասը այս բառերը արդեն համարում է հայիոյանք, «անիծյալ դեմոկրատ» դարձավ ամենից տարածված արտահայտությունը:

Վարկաբեկված է նաև «պատրիոտիզմ» [հայրենասիրություն], հասկացությունը, ինչը ներկայումս նույնացնում են բոլորյան, անգամ խուլիգանության հետ, շնորհիվ Անպիլովի աղվկոտ ելույթ-

ների: Հեռատեսիլով կանոնավոր կերպով, շարունակ խոշոր ու մանր սրիկաներին որպես ազնիվ բարերարներ ցուցադրելն ու ներկայացնելը ավերիչ ազդեցություն է թողնում հոգեւոր արժեքների վրա, որոնք դեռևս պահպանվել են բնակչության մոտ:

Շարունակվում են օկուկտային գիտությունների խրախուսումը, Կաշպիրովսկու, Չումակի ելույթները, Հնդկաստանից մեր միջոցով բերվել են կրիշնայականներ, հրավիրվել են նաև ամերիկյան քարոզիչներ, ձեռնարկված են նաև այլ միջոցներ՝ հասարակության կոնֆեսիոնալ [դավանանքային] քայքայման ուղղությամբ:

ՋԼՄ-ներով անընդհատ կանոնավոր կերպով անց է կացվում կամպանիա, հասարակությանը ներշնչելու նպատակով այն, որ միակ արժեքավոր բանը կյանքում՝ փողն է: Մեծ օգնություն են ցույց տալիս մեզ վալյուտային [արտարժույթային] պոռնիկները, որոնք երիտասարդ սերնդին պատմում են, թե ինչպես պետք է ապրել:

Մակայն պիտի խոստովանեմ, որ մեզ չհաջողվեց լրիվ չափով ապահովել աղաղակող պոռնոգրաֆիայի ներթափանցումը հեռատեսիլ, մասնավորապես մանկական սեքսի, անասնաբանի ու նեկրոֆիլիայի մասով: Օգոստոսյան իրադարձություններից հետո մեր խնդիրը նախ եւ առաջ հասարակությանը լիակատար սնանկացման հասցնելն էր: Յուրի Վլադիմիրովիչը թերագնահատեց մեր տնտեսագետ-տեսաբանների ավերիչ տաղանդը. գործնականում, երկու տարում «Գողգոթայի» երկրորդ փուլի բոլոր կետերը կատարված էին ու երրորդ փուլի անհրաժեշտությունը վերացավ՝ այն օրգանապես սկսվեց արդեն Բելավեժյան համաձայնագիրը ստորագրելուց հետո:

Պետք է նշել, որ վերջինս [(Բելավեժյան համաձայնագիրը)] «Գողգոթայի» նախատեսված չէր: Քանի որ Յու.Վ.-ն նոր հասարակությունը պատկերացնում էր Խորհրդային Միության շրջանակներում: Մի քանի անգամ Անդրոպովի հետ մեր անձնական զրույցներում եւ շոշափել եմ ԽՍՀՄ-ի հնարավոր տրոհման, Միջին Ասիայում ու Կովկասում, Ռուսաստանի եւ Ուկրաինայի միջև՝ Դրիսի ու Դոնբասի համար, հնարավոր պատերազմների մասին միտքը, վերջապես, սահմանների վերաձեւման պատճառով ԽՍՀՄ-ի տարածքում երրորդ համաշխարհային պատերազմի հնարավորությունը:

– Ամեն ինչ հնարավոր է, – ասում էր Յու.Վ.-ն, – Մենք «Գողգոթայում» տալիս ենք մագիստրալային ուղղությունները եւ չենք կարող միշտ կանխատեսել, սակայն ես չեմ կարող պատկերացնել, որ նոր առաջնորդներն այնքան հիմար կգտնվեն, որ վերջին էտապին կմոտենան ամենաարյունահեղ մեթոդներով: Եթե մենք չհավատանք մարդկանց, մենք չենք կարող նոր հասարակություն կառուցել: Եւ, այնուամենայնիվ, Յու. Վ.-ն մաքուր մարդ էր ու՝ իդեալիստ:

Բայց նույնիսկ ես, լրտեսության կեղտոտ ոլորտում իմ իրազեկությամբ հանդերձ, չէի կարող պատկերացնել, թե ավարտական փուլին մենք կմոտենանք այդպես անհզորեն. ազատ զինել, պետական ու մասնավոր ընկերությունների կողմից՝ բնակչության կողոպուտ, ինֆլյացիա [(արժեզրկում)], լայնատարած կոռուպցիա, արտոնությունների դեմ պայքարի կարգախոսի ներքո՝ գողություն ու հարստության կուտակում, երկրի լիակատար քրեականացում, այս ամենը համաձայն, «Գողգոթայի», պետք է իրականացվեր քսան տարվա ընթացքում, բայց մենք գերակատարեցինք պլանը ու հաջողությունների հասանք արդեն 1993-ին:

Առանձնապես հաջող էր ընթանում արտոնությունների դեմ պայքարի կամպանիան, որի արդյունքում արտոնությունների ցանկը մի քանի անգամ աճեց, ինչը ծայր աստիճանի զայրացրեց ժողովրդին: «Գողգոթայում» մեծ նշանակություն էր տրվում հանցագործության աճին, մեր դժվարությունը նրանում էր, որ Ռուսաստանում խոշոր խաբեբաներ [(աֆերիստներ)] – գրեթե չէին ծագել, բոլորին նստեցրել էին, փոխարենը խուլիգաններն ու մանր-մունր գողերը՝ վխտում էին ամենուր: Այդ կապակցությամբ դեռևս Անդրոպովի կյանքի օրոք, մենք ստեղծեցինք ՊՄԿ-ի հատուկ դպրոցներ, ուր մանրակրկիտորեն նախապատրաստում էին «բարձր որակավորման» մաֆիա, ում նույնիսկ օտար լեզու էին սովորեցնում, այն հաշվով, որ նրանց ապագա գործերն ամբողջ աշխարհն են ընդգրկելու:

Մենք մարտական շատ մոտ կապեր հաստատեցինք ԿԿՀ-ի հետ, որը, մեր իսկ խնդրանքով, արագորեն իրեն ենթարկեց Արևելյան Եւրոպայի բոլոր երկրները. ընդհանրապես, այն բանից հետո, երբ Գորբաչովին հաջողվեց նախկինում սարսափած

190

Արեւմուտքի մոտ ցրել բոլոր վախերը, արտաքին աշխարհի բոլոր իրադարձությունները հանգում էին հետեւյալ պարզ բանաձեւին. «Արեւմուտքը ստիպում է, իսկ մենք զիջում ենք», իսկ ժամանակ առ ժամանակ ավելի արդյունավետ բանաձեւի. «Մենք զիջում ենք, իսկ Արեւմուտքը չի հասկանում ինչու, եւ շփոթվում է»:

